

2209

ՀԱՍՏԱՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 18

9(44)

Գ-91

Պրովետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆՆ Է 3 ԲՈՒՔ.

(Великая Французская Революция)

9(44)

Գ-85

3(44)
8-85

24 JAN 2006

№ 18

ԽՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 18

Պրոլետարներ ըզրը երկրների, միացե՛ք!

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

(Великая Французская Революция)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ԾԱՌԱԿՈՒՄ — 1919

989 8408 5121

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

I

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Եթէ մենք մտքով փոխադրենք Փրանսիա, ինչպէս որ նա էր որանից հարիւր և աւելի տարի առաջ,—մինչ՝ յեղափական Փրանսիան,—կտեսնենք այժմ այդտեղ տիրող յարաբերութիւնների բոլորովին տարբեր պատկերը: Ժիշտ է, նրանք տարբեր են ոչ ամեն իմաստով: Չէ որ, ինչպէս այն ժամանակ, նոյնպէս և այժմ Փրանսիայում և ամբողջ Եւրոպայում մենք տեսնում ենք հասարակական կեանքի մի՛ հիմք՝ դասակարգային տիրապետութիւն, մարդկանց հինաւուրց բաժանումն, հարստահարողների և հարստահարւողների, ճնշողների և ճնջւողների. ինչպէս այն ժամանակ, նոյնպէս և այժմ, իսկոյն աչքի են ընկնում դասակարգային հասարակութեան հոգի վրայ աճած բոլոր թունաւոր բոյսերը. մասսաների աղքատութիւնը և բուռն մարդկանց կենսական զւարճութիւնները. մի կտոր չոր հաց՝ միլիոնների համար և ուրախ խրճուղներ դատարկապորտների խմրակի համար, խաւար՝ մեծամասնութեան համար և լոյս՝ քչերի համար, Մի՛թէ այժմ էլ, ինչպէս և Յեղափոխութիւնից առաջ, գոյութիւն ունեն բոլոր այդ հին խոցերը ծածկւած միայն նոր շորերով: Մի՛թէ աշխարհումս միայն մալերեռային, արաբին փոփոխութիւն է տեղի ունեցել:

Տպարան՝ Կենտրոն. Հայկական Կոմիսարիատի, Մոսկւա, Արմենասիկի ֆ., տ. 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п.2



926-93

Ոչ: Յեղափոխութիւնից առաջ Փրանսիական հասարակութիւնը խիստ տարբերուում էր այն հասարակութիւնից, որ ծագեց յեղափոխական փոթորկի մէջ: Եթէ դուք ուզում էք երկու խօսքով օրոշել այս տարբերութեան խորագոյն հոլութիւնը, կարող էք ասել այսպէս. Յեղափոխութիւնից առաջ Փրանսիայում իշխում էին երկու արտօնեալ դասեր, — ազնւականութիւնն և հոգեւորականութիւնը, իսկ այժմ իշխում է մի դասակարգ՝ բուրժուազիան: Եւ ահա թէ որոնք է մեր և այն ժամանակների նմանութիւնն ու տարբերութիւնը միաժամանակ. ինչպէս այն ժամանակ, նոյնպէս և այժմ, հին աշխարհն աւերուում է. բայց 1789 թւականը, — մեծ յեղափոխութեան օկիզքը, — աւերիչ հրով այրեց ազնւական արտօնութիւնները, այն ինչ այժմ միայն կոչը կարող է չտեսնել բուրժուական հասարակութեան մօտալու մահը:

Աւերման աշխատանքը քննելուց առաջ, պէտք է կանգ առնել այն հարցի վրայ, թէ՛ ի՞նչ էր արտօնեալ ազնւականութեան և հոգեւորականութեան այդ հասարակութիւնը և ինչ՞ուտ եւրեք: Դիւատման և թաղման տեղը գնալուց առաջ, նայենք նրանց, որոնց համար մահն արդէն դարան էր ծախ, բայց որոնք դրան չէին սպասում: Դրա հետ միասին ծանօթանանք և ապագայ գերեզմանափորների հետ:

Փրանսիական հասարակութիւնը յեղափոխութիւնից առաջ բաղկացած էր երեք դասից, որոնց առաջին երկուսն օժտւած էին իրաւունքներով և արտօնութիւններով, իսկ պարտաւորութիւնների գրեթէ ամբողջ ծանրութիւնն ընկած էր երրորդի, ամենաբազմաթիւ վրայ: Առաջին դասը հոգեւորականութիւնն էր, եկեղեցական գերիշխանութիւնը, սկսած բարձրագոյն հոգեւորական անձերից մինչև գիւղական քահանաները: Միւս դասը՝ ազնւականութիւնն էր, — «ազնւատոհմները», զրոյմաւորներն ու ախտոյսաւորները: Վերջապէս, երրորդը՝ իրաւագուրդ և անտիտղոս բազմութիւնն էր, զանազան զբաղմունք ու հասարակական գրութիւն ունեցող

միլիոնաւոր մարդիկ, սկսած հարուստ կապիտալիստներից և փալլուն իրաւաբաններից մինչև աղքատ, խաւար, ընկճւած «գեղջուկը»: Ինչպէ՞ս էր այդ դասերի թւական յարաբերութիւնը: 26 միլիոն բնակչութիւնից արտօնեալները ծիծաղելու աստիճան քիչ էին, այսինքն, ընդամենը՝ 270 հազար, որոնցից ազնւականութիւնը՝ 140 հազար և հոգեւորականութիւնը 130 հազար էր, այսինքն՝ Փրանսիայի մօտաւորապէս 100 բնակչին ընկնում էր մէկ արտօնեալ: Տեսնենք թէ, ի՞նչ տեսակի էին այդ արտօնութիւնները: Այստեղ մենք կանգ չենք առնի մտնրամասնութիւնների վրայ, որովհետեւ մեզ համար կարեւոր է միայն ընդհանուր պատկերը:

Ամենից առաջ, ինչ վերաբերում է տուրքերին, զրանց բոլոր ծանրութիւնն ընկած էր երրորդ դասակարգի վրայ: Հոգեւորականութիւնը բոլորովին ազատ էր դրանցից. նա պետութեանը վճարում էր իր հարստութիւնների համեմատութեամբ չնչին գումար, որպէս «կամաւոր նւիրաբերութիւն»: Իսկ ազնւականութիւնն ամենաժանր տուրքերն ամենեւին չէր վճարում, միւսներից էլ սովորաբար կարողանում էր խուսափել: Մի խօսքով, տուրքերը բոլորովին հաւասարաչափ չէին բաժանւած, — չկար տուրքերի հաւասարութիւն: Բայց, սրա փոխարէն, թէ ազնւականութիւնը, թէ հոգեւորականութիւնը լի բռնով կորցում էին տէրութեան գանձից. մանաւանդ պալատականների վրայ ռոճիկների և ընծանների ոսկէ անձրեւ էր թափւում: Թագաւորը, յաճախ, տուրքերի փողերով վճարում էր իր սիրելիների պարտքերը: Այս բաւական չէր. պետական ծառայութեան, զօրքի մէջ, արքունիքում, եկեղեցւում, բոլոր ամենալու ու արդիւնաւետ պաշտօնները, որ չէին պահանջում ոչ մի, կամ գրեթէ ոչ մի աշխատանք, տրւում էին բացառապէս ազնւականութեանը: Պատահում էր, որ զինւորներն ամբողջ ամիսներով սպասում էին զրոյաւոր ռոճիկի, իսկ սպաներն ապրում էին ճոխութեան մէջ:

Աղնւականների արտօնութիւնների ծանրութիւնն ընկնում էր մանաւանդ՝ Փրանսիական հասարակութեան ամենատար շերտի՝ գիւղացիների վրայ: Ուղիղ է, գիւղացիների մասսան կարողացել էր արդէն ազատել ճորտութիւնից, բայց և այնպէս դեռ 1789 թ. մօտ մէկ միլիոն ճորտ գիւղացիներ կային: Մանաւանդ հոգեւորական աստիճանաւորները պահպանում էին ճորտերին իշխելու իրաւունքը: Գիւղացիական ամբողջ բազմութիւնը տանջւում էր աղնւականների բազմութիւ «իրաւունքներից»․ օրինակ՝ օրսի իրաւունքից, որի շնորհիւ գիւղացին ատամների կրճատումով և անգոր չարութեամբ պէտք է նախէր, թէ ինչպէս տիրոջ որոք ոչնչացնում է նրա շատ տառաւայ աշխատանքի պատուները: Խաղող հաւաքելու իրաւունքից, որի շնորհիւ խաղող հաւաքելուց յետոյ ամբողջ առաջին ամսւայ ընթացքում՝ միայն տիրոջ գինին կարող էր վաճառւել: փողով և մթերքով բազմութիւ ծանր տուրքեր հաւաքելու իրաւունքից: Գիւղացիների համար պահաս ծանր չէր տասանօրգը (գոյքի տասերօրգ մասը եկեղեցու օգտին), որ վճարում էին «հողւոր հովիւներին» և որ յաճախ կլանում էր հողի եկամտի հինգերորդ և նոյն իսկ երրորդ մասը:

Սակայն չպիտի կարծել, թէ՛ ամբողջ աղնւականութիւնն ու հոգեւորականութիւնն էր ապրում ճոխութեան մէջ: Աղնւականութեան նշանաւոր մասը սնանկացած էր. գիւղական աղքատ քահանաները նախանձով էին նայում հարուստ եպիսկոպոսներին և արքաներին: Իսկ այս ընտիրների ընտրեալներն իրենց ձեռքում ահագին հարստութիւններ էին կենտրոնացրել: Բաւական է ասել, որ՝ եկեղեցական գոյքերի արժէքը 4 միլիարդ Փրանկ էր կազմում, մի գումար, որը պէտք կլինէր շատ մեծացնել՝ զրա այժմեան արժէքն իմանալու համար:

Իսկ ի՞նչ օգուտ էին բերում հասարակութեան՝ այս մի բռն ընտրւածները: Ո՛չ մի: Վաղուց արդէն տերերը լքել

էին իրենց միջնադարեան օրտնեղիչ գղեակները, որպէսզի ուրախ, զւարճութիւններով լի կեանք վարեն Պարիզում կամ Վերսալում, — արքունի օտարական բնակավայրում: «Կեանքի ճոխութիւնը չի իմանում՝ նա, ով 1789 թւից տուալ չի ապրել Փրանսիայում», ասել է յեղափոխութիւնից յետոյ, Տալէրան եպիսկոպոսը: Յիրաւի, տշխարհիս զօրեղների համար դա իսկապէս «տօնական» մի կեանք էր: Մարմնի և հոգու համար անընդհատ խնձօք էր դա, բաժակների չրխկոցների, սիրային շշուկների ու համբոյրների, օրամտութեան հրթիռների մէջ: Սալոնական փայլը, ներքին նեխածքն ու բարոյական օչնչութիւնը՝ քողարկող լաւ տոնն» այստեղ բարձրագոյն զարգացման էին հասել:

Բոլոր արտօնեալների շարքում ամենաարտօնեալը Փրանսիայի թագաւորն էր, («արեւ-թագաւորը», որին էին ուղղւած բոլորի աչքերը, որի փայլից տաքանում էին պալատական թիթեռնիկների ուրախ բոյլերը: Ինքնակալ տէր էր նա անսահման իշխանութիւնով, և նա իր ձեռքում բռնած էր ամբողջ պետութեան բախտը: «Պետութիւնը, — այդ ես եմ», հպարտութեամբ ասաց Փրանսիական թագաւորներից մէկը, Լիւդովիկոս XIV: Միջնադարեան իշխանիկների նախկին ինքնակամութիւնը վաղուց արդէն ընկճւած էր: 1614 թ. արդէն չէին հաւաքւում Դասային համաժողովները, այսինքն ամբողջ Փրանսիայից դասերի ներկայացուցիչները, որոնք թէեւ քիչ չափով, բայց և այնպէս սահմանափակում էին թագաւորի ամենազօրութիւնը: Մի քանի տեղերում դեռ հաւաքւում էին զաւառական ժողովները (նման մեր զեմաւովներին), բայց նրանց նպատակը զրեթէ բացառապէս տուրքերի բաշխումն էր:

Ամբողջ իշխանութիւնը զտնւում էր թագաւորի և նրա աստիճանաւորների ձեռքում: Աղնւականութիւնը պահպանել էր իր հասարակական արտօնութիւնները, բայց կորցրել էր իր քաղաքական նշանակութիւնը: այսինքն, որպէս դասակարգ, նա զրկւած էր կառավարութեան և օրէնսդրութեան մաս-

նակցութիւնից: Բայց թէ՛ն էր ինքը, թագաւորը: Ոչ այլ ինչ, եթէ ոչ Փրանսիայի առաջին աղնւականը, որ իր ձեռքն էր կենտրոնացրել կալածանքի անագին քանակութիւն, աւելի, քան ունէր որեւէ մէկն ուրիշ աղնւականներից: Նրա սեփականութիւնն էր Փրանսիայի գանձարանը, ուր Ֆրանսիական ժողովուրդը ձգուած էր իր ղեկավարութեամբ վաստակած գոշները: Թագաւորը կարող էր գործադրել այն բոլոր քմահանձութի, առանց որ և է մէկին հաշիւ տալու: Չարմանալի չէ, որ ժողովրդի աղքատութեան պատճառով, շնորհիւ այն բանի, որ արածոնեալները ոչ մի հարկ չէին տալիս, իսկ ժողովուրդը զուրկ էր պետութեան եկամտին և ծախսին հսկելու իրաւունքից, այո՛, զարմանալի չէ, որ այս պայմաններում տէրութիւնն աստիճանաբար մօտենում էր սնանկութեան անդնդին: Պետական պարտքը 3 միլիարդ ֆրանկից աւել էր, իսկ տարեկան ծախսերը 120 միլիոնով աւել էին եկամուտից:

Մենք տեսանք արտօնեալների դրութիւնը. այժմ անցնենք երրորդ դասին: Իսկ ամենից առաջ ինչն ենք նորա ամենախոնարհ շերտին, — գիւղացիների փոտ: Նրանք աղքատներից աղքատն էին, խաւարներից՝ խաւարը: Ազնւականութիւնը, հոգեւորականութիւնը, տէրերի կալածանքների կառավարիչները, հարկահանները, բոլորը կողոպտում էին գիւղացուն, ծծում էին նրա կենսական հիւթերը: Մենք արդէն խօսել ենք տասանորդի և գիւղացոց գոյքի ու աշխատանքի վերաբերմամբ աղնւականների ունեցած զանազան իրաւունքների մասին: Բացի այդ, գիւղացին պարտաւոր էր տէրութեանը վճարել, և այն էլ շատ վճարել: Մի քանի տուրքեր ուղղակի անամօթ բնոյթ էին կրում. «յսպէս օրինակ՝ որպէսզի տէրութեան գանձարանի եկամուտն աւելանայ, տէրութիւնն օժտւած էր աղ ծախելու բացառիկ իրաւունքով և բոլոր 7 տարեկանից վեր մարդկանց ստիպում էին գնել տարեկան 7 ֆունտ աղ բացառապէս ռետելու համար: Այս հարկադրութիւնն այնքան էր ձանձրացրել գիւղացիներին, որ միապետական

զգացմունքներից դեռ չազատւած այդ աղքատները ողջունում էին թագաւորին կոչերով. «Կեցցէ՛ թագաւորն, առանց աղի ստիպողութեան»: Չարմանալի չէ, որ տէրերի (աղքուկների) այսչափ անխիղճ շահագործման ժամանակ, գիւղացիական հողի անագին տարածութիւններն անմշակ էին մնում. զարմանալի չէ, որ աճում էր թափառականների, մուրացիկանների, գողերի և աւաղակների բանակը:

Այնուհետև եթէ անցնենք քաղաքներին և դիմենք ամենախոնարհ խաւերին, այն ժամանակ, մի կողմ թողնելով բազմաթիւ անտուններին ու մուրացիկաններին, այստեղ բանւորների կիանդիպենք: Բայց սրանք իրենց ուրոյնութեամբ ու շահերի գիտակցութեամբ յատուկ դասակարգ չէին կազմում այժմւայ պէս: Ժամանակակից պրոլետարիատը այն ժամանակ դեռ նոր էր առաջ գալիս: Գոյրշու ուժով շարժող ֆարրիկներ դեռ չկային. արհեստավորների քարդեաններ, ճութավաճառի գործակատարներ, հանքագործային բանւորներ, — սրանցից էր կազմւած պրոլետարիատը: Անհանգիստ, անբաւական տարր էին սրանք, լի առելութեամբ դէպի հառարակութիւնը, որ հարստահարում էր նրանց: Բացի անբաւականութեան ընդհանուր աղբիւրներից, բանւորները յատուկ ստեղծութիւն էին տաժում դէպի գործադուլութեան առաքիչների վրայ գրւած քաղաքային մաքսերը և համքարային ճնշումը: Ազատ արհեստը թոյլարւտած էր միայն մի քանի վայրերում (Փարիզում օրինակ, Սենտ-Անտուան արւարձանում): Համքարային վարպետի կոչումը մատչելի էր միայն ունեւորներին, կամ կապեր ունեցողներին: Անբաւական լինելու քիչ առիթ չունէր նաև քաղաքային բնակչութեան մնացած մասը, որ այժմ մեզ յայտնի է «մանր մեշխաններ» ընդհանուր կոչումով, և որից՝ պրոլետարիատը, որպէս դասակարգ, դեռ շատ քիչ էր չոկուում: Տուրքերով ծանրաբեռնւած, համքարային արտօնութիւններից հարստահարւած, քաղաքային վարչութեան և պետական պաշտօնեաների ամենօրեայ չա-

բաղորդութիւններին ենթակայ, ամեն անգամ հացի դիրք բարձրանալիս մուրացկանութեան մատնւող այս բոլոր քաղաքացիները, մանաւանդ Փարիզում, Փրանսիայի մայրաքաղաքում, միտում էին ատելութեամբ դէպի ազնւականութիւնը, որ իր ճշմութեամբ ու զեղի կեանքով ծակում էր նրանց աչքը:

Բայց, ինչպէս մենք արդէն ասացինք, երբորդ զասք միայն «աւանդներէ», աղքատներից, իրաւագուրդներից չէր բաղկացած. նրա բարձր խաւը բաղկացած էր այն դասակարգից, որ յետոյ անշատեց, ինչպէս բոլոր ժուազիւս և հասարակութեան մէջ առաջաւոր դիրք գրաւեց: Մինչդեռ ազնւականութիւնը կարողանում էր միայն ուրախութեամբ փող ցանել քաղքենիները հարստանում էին շնորհիւ արհեստի ու վաճառականութեան: Շարժուն կապիտալը հետզհետէ օկսեց աւելի դեր խաղալ հասարակական կեանքում. փողն աստիճանաբար սկսեց օժնւնցնել նախկին դասային զանազանութիւնները: Այս մասին ամենից լաւ փայտում է այն ջերմութիւնը, որով Ֆրանսիական ազնւականութիւնը, — ինչ ու տղամարդ, — գեռ XVIII դարի առաջին կիսում մասնակցում էր Ջոն Լոուի դրամական սպեկուլեցիաներին: Լասսալը իր «Բանուորների Մրադւում» մէջ է բերում մի անեկդոտ, որ ամենագեղեցիկ կերպով նկարագրում է այն ժամանակաւ ազնւականութեան սպեկուլեցիայի տենչը: Մէկ անգամ ամենանշանաւոր տոհմերից մի քանի կանայք մի յայտնի Ֆինտնսիստի համոզում էին, որ սա զիջէ նրանց իր հրատարակած աղիթանների մի մասը, որ այն ժամանակ Փրանսիայում ձեռքից ձեռք էին խլում, որովհետեւ մեծ արդիւնք էին բերում այդ աղիթաններ: Լոուն շատ էր շտապում. ուստի կամենալով ազատուել ձանձրալի արիստոկրատուհիներից, նա ասաց. «Յարգելի տիկիններ, հազար ներողութիւն եմ խնդրում, բայց ես կճաքեմ, եթէ դուք ինձ չարձակէք. — որովհետեւ դուրս գնալու կարիք ունեմ և էլ չեմ կարող ինձ պահել»: Սրան տիկիները պատասխանեցին. «Ոչինչ, յարգելի պարոն, արէք ձեր անելիքը»:

միայն լսէք մեզ»: Եւ, յիրաւի, մինչդեռ Լոուն իր բնական կարիքն էր կատարում, տիկիները կանգնած էին նրա կողքին և բացօթում էին նրանց իրենց գործը:

Դրամական կապիտալի զօրութիւնն այն ժամանակ արդէն շատ մեծ էր, և զարմանալի չէ, որ՝ քաղքենիները, արգիւնաբերողները, առեւտրականները, բանկիրները, որոնք խնամքով հոգում էին իրենց գործերը, հարստանում ու դիրք էին գրաւում: Բայց կապիտալիստներից հետզհետէ մեծ նշանակութիւն էին ձեռք բերում բուրժուական ինտելլիգենցիան, այսինքն՝ փաստաբանները, բժիշկները, լրագրողները և այլն: Որքան աւելի ուժեղ էր զարգանում հասարակական կեանքը, այնքան աւելի էր բազմանում այս խմբակը. իսկ որովհետեւ նա ուսման առաւելութիւններ ունէր, սկսեց մեծ ազդեցութիւն վայելել:

Սակայն, թէև բուրժուական հասարակութեան մէջ խիստ նշանաւոր դիրք էր գրաւել, բայց երկու բարձր — դասակարգերի համեմատ նա իրաւագուրդ էր: Ազնւականն ամեն քալափոխի կարօտ էր քաղքենու աշակցութեան և զուգում էր նրա անհրաժեշտութիւնը, սակայն չէր քաշւում արտայայտել նրան իր անուշադիր վերաբերմունքն ու արհամարհանքը: Քաղքենուն ամենայնաւոր մարդն էին համարում, — մարդ, որը պէտք է մտածէ միայն իր «գործերի» մասին, բայց չի կարող վիճել փալուն ազնւականի հետ կամ երեւակայել, որ երբեք իրաւունքով կհաւասարւի նրան:

Քաղքենիները սորա փոխարէն բացարձակ ատելութիւն էին տածում դէպի ազնւականութիւնը: Նրանք յարձակուած էին առաջին երկու դասերի արտօնութիւնների, պետական վարչութեան անկարգութեանց ու զանցառութեանց դէմ, արքունի դանձարանի արդիւնքի հանդէպ ցոյց տաւ. թեթեւամիտ վերաբերմունքի դէմ, մի վերաբերմունք, որ սնանկութիւն էր սպառնում պետութեանը, բազմաթիւ արդելիքների դէմ, — որոնց համար արդիւնաբերութիւնն ու վաճառա-

կանութիւնը հարկադրւած էին կուելու (ինչպէս երկրի ներքին մաքսերը, ճանապարհների վատ դրութիւնը, համըս-
րութիւնը և այլն),—արդարադատութեան անկման դէմ և
այլն, և այլն:

Ճնշւած և իրաւազուրկ, բայց լի կենսական ոյժերով
երրորդ դասը ձգտում էր անտանելի հասարակական-քաղա-
քական կարգերը, կամ, աւելի ճիշտ, անկարգութիւնները
հիմնովին փոխել: Նարեկի է տեսել, որ՝ Փրանսիայում յեղա-
փոխութեան նախօրեակին գրեթէ բոլորն անբաւական էին.
թէ և զանազան պատճառով և տարբեր աստիճանով: Աղնւա-
կանութիւնն անբաւական էր նրանով, որ՝ հոգևորականու-
թիւնը իր ձեռքում ահագին հորստութիւններ էր կեն-
տրոնացրել: Աւելի չքաւօր աղնւականութիւնը, կամ սրա մի
մասը, որ ստիպւած էր ապրել և սրտնեղիլ գիւղերում, նա-
խանձով էր նայում արիստոկրատիային: Ստորին հոգևորա-
կանութիւնը հոգու խորքում նզովում էր հարուստ եպիսկո-
պոսներին և աբբաներին: Արաօնեակները նայնպէս երբեք
զայրանում էին պետութեան դէմ, ժանաւանդ այն ժամանակ,
երբ սա մտադրւում էր նոր տուրքեր նշանակել, որովհետև
նրանք վախենում էին, թէ իրենց գրպաններին կլիպչեն:

Եւ այդպէս մենք տեսնում ենք, որ անգամ բարձր դա-
տնում անբաւականութիւն և նոյն իսկ զայրոյթ էր առա-
ջանում պետութեան դէմ: Բայց դա փոթորիկ էր մի բա-
ժակ չրի մէջ, որ ոչ ոքի և ոչնչի վնաս չէր տալ, եթէ ազ-
գային կեանքի լայն ծովում չորոտար զօրեղ փոթորիկի Նը-
րորդ դասը,—բուրգուադիան ու ժողովուրդը,—առաջ բերեց
այս փոթորիկը, որին վիճակւած էր կործանել «ոգոմու-
թեամբն Աստուծոյ» արաօնութեանց պետութեան տիրական
նաւը:

Այս նաւը յեղափոխութեան մրրկի նախօրեակին առ-
տանւում էր առանց դեկի: Նաւաւարութիւնը չէր կարողա-
նում Ֆրանսական դժւարութիւնները հարթել: Նախարար-

ները յաճախ փոխւում էին, բայց նրանցից ոչ մէկը չէր կա-
րողանում թեթեւցնել իր առաջիկայ դժւարութիւնները:
Նրանցից լաւագոյնը—Տիւրգոն—կամենում էր մի քանի պրո-
գրեսսիվ փոխութիւն կատարել, ի միջի այլոց, աշխա-
տանքի ազատութիւն հռչակել և համըսրութիւնը ոչնչացնել.
բայց արաօնեակների շրջանում այս առիթով վրդովմունքի
աղաղակներ բարձրացան: Նրանք վախենում էին, որ, եթէ
նրանց արաօնութիւնների շէնքից մի աղիւս հանւի, այն ժա-
մանակ «խուժանն» իսկոյն կցանկանայ դետնի հետ հաւասա-
րացնել ամբողջ շէնքը: Տիւրգոնի նախարարութիւնը տապալ-
ւեց: Ասում են—Տիւրգոն հեռանալիս, իր թագաւորին լի-
շեցրեց անդլիական այն թագաւորի վիճակի, որի դուխը
ժողովուրդը կտրեց յեղափոխութեան ժամանակ: Նաւանարար
Տիւրգոն չէր կասկածում, որ իր մարդարէութիւնը այնքան
շուտ կկատարւի:

Պետութիւնը փողի խիստ կարիք ունէր և չէր կարո-
ղանում դանել: «Դատարկ տեղից Սոդոմոնն անգամ չի կարող
լցնել»: Գիւղացիական դատարկ գրպաններից ոչինչ արգէն
չէր կարելի ստանալ: Նապիտալիստներն այլ ևս չէին կամե-
նում փոխառութիւն տալ, որովհետև բաւարար երաշխիք
չունէին, թէ պետութիւնը կվերադարձնի այդ փոխառու-
թիւնը: Աղնւականութիւնն ու հոգևորականութիւնը չէին
ուղղում վճարել, իսկ երրորդ դասը բարձրաձայն ազդարա-
րում էր, որ տէրութեան վանձարանի դրութիւնը կարող է
ուղղւել միայն այն ժամանակ, երբ երկրում վճռական, էական
բարեփոխութիւններ կկատարւեն:

Նաւաւարութեանն անելու ոչինչ չէր մնում, քան Դա-
սային Նամաժողով, այսինքն, բոլոր երեք դասերի ներկայա-
ցուցիչների ժողով հաւաքել. նա պահանջում էր նաև, որ
նրանք պետութեան եկամուտը բարձրացնելու միջոց գտնեն:
Բայց երբ ներկայացուցիչները ժողովեցին, պարզւեց, որ՝
երրորդ դասն արդէն մտադիր չէր նախկին ստորացուցիչ

գերը խաղալ և բաւականանալ միայն նոր տուրքերն ընդունելով: Մեր ժամանակ ունեւոր դասակարգն այլևս չի կուտն պետութեան գէմ, նա առաջաւոր դասակարգ չի հանդիսանում, որովհետեւ արդէն կաաւրեալ իշխանութիւն է ձեռք բերել, իսկ երիտասարդ հսկայ պրօլետարիատը կամենում է նրա ձեռքից խլել այդ իշխանութիւնը: Բայց այն ժամանակ բուրժուազիան առաջաւոր, և նոյն իսկ յեղափոխական դասակարգ էր, որովհետեւ կամենում էր թագաւորի, ազնւականութեան և հոգեւորականութեան ամենազօրութիւնը ոչնչացնել: Իսկ այդ ձգտման կողմնակից էր ամբողջ ժողովուրդը, — զինական և քաղաքային հասարակ ժողովուրդը, — որն աւելի խիստ էր ատում առաջնայ կարգերը, որովհետեւ այդ կարգերից նա աւելի էր տանջւում, իսկ յեղափոխութիւնից նա կարող էր միայն շահել և ոչինչ չկորցնել:

Այսպէս սկսեց Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը:

II.

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԵԱՆ ԲՈՆԿՈՒՄԸ

Վառօգով լի ամբարում նոյն իսկ մի կայծ կարող է չլուծած պայթիւն առաջացնել: Ֆրանսիական հասարակութեան մէջ քիչ-քիչ բայց անդադար պայթուցիկ նիւթ էր ամբարում: Դասային չամաժողովի գումարումն այն կայծն էր, որ բնկաւ վառօղի մէջ:

Իրաւ է, սկզբում թւում էր, թէ յեղաշրջումը բաւականին հանդարտ կլինի, բայց յետոյ յանկարծ պարզեց, որ հին և նոր կարգերն իրար գէմ պէտք է մղեն կեանքի ու մահուան պայքար: «Սրիւնահեղ պայքար կամ մահ: Սրիւնահեղ պայքար կամ ոչինչ», — այսպէս անխնայ էր գրւած այս հարցը: (Ֆրանսիական գրող Ժորժ-Չանդի խօսքը):

Երբ յայտարարւած էին Դասային չամաժողովի բնութիւնները, միաժամանակ բնակչութեան թույլատրեցին

իր դրութեան մասին պահանջագրեր ու դանդաղագրեր տալ: Այս պահանջագրերի ու դանդաղագրերի տետրակները կոչւում էին «Cahiers de doléances» («տրտունչների տետրակներ»): Այս տետրակները մեզ ամենայաւ գաղափարն են տալիս այն մասին, թէ ի՞նչ էին պահանջում Ֆրանսիական հասարակութեան զանազան խաւերը: Հասկանալի է որ միակը, — որ հասարակական պետական կազմի վեճական ու խորին փոփոխութիւններ էր պահանջում, դա՛ երբորդ դասն էր: Եւ այն ժամանակ թէ՛ Ժողովուրդն արդէն երկչոտ ուշադրութիւն էր դարձնում իր կրած յատուկ անշուքների վրայ, բայց գլխաւորապէս, այնու ամենայնիւ, ամբողջ երրորդ դասի համար ընդհանուր պահանջներ էր յաբուցում: Դիւաւոր ձգտումն այն էր, որ օրէնքները հրատարակեն ազգի ներկայացուցիչները, բայց ոչ ինքնիշխան կառավարութիւնը, որպէսզի այդպիսով լիակատար հաւասարութիւն հաստատւեր. (այսինքն, որ՝ ամեն մէկը տուրք վճարէր իր գոլքի համաձայն), որպէսզի հաստատւեն երգւեալների գատարաններ, մամուլի, միութեանց ու ժողովների ազատութիւն, որպէսզի վերանան համբարները, մաքսերը երկրի ներսում, տասանորդն ու առհասարակ ազնւականութեան և հոգեւորականութեան ամեն աեսակ արտօնութիւնները:

Այս և նման պահանջների կատարումն կարեւոր էր ոչ միայն ունեւոր դասակարգի, այլ և Ֆրանսիական ամբողջ ժողովրդի համար: Եւ եթէ այն ժամանակ բուրժուազիան խողովրդի առաջնորդն էր, հէնց այն պատճառովն էր այդ, որ նա ժողովրդի հետ մի ամբողջ շարք ընդհանուր պահանջներ ունէր, որ պայքարում էր յանուն ազատութեան ու յառաջադիմութեան: Այն ժամանակ միայն բուրժուազիայի զեկավարութեամբ կարող էր տեղի ունենալ հասարակութեան յառաջադիմական զարգացումը, վաճառականութեան, արդիւնաբերութեան, լուսաւորութեան զարգացումը: Ինչպէս այժմ պրոլետարիատի, սօցիալիստական կուսակցութեան շուրջն է

կենտրոնանում այն ամենը, ինչ որ հասարակութեան մէջ կենտունակ է ու յառաջադիմական, նոյնպէս և այն ժամանակ առաջաւոր սարքերի կենտրոնը բուրժուազիան էր:

Նոյն բուրժուազիան էլ ամբողջ երրորդ դասի ներկայացուցիչն էր հանդիսանում Դասային Համաժողովում: Երրորդ դասն այսպէս նոյնքան ներկայացուցիչներ ունէր, որքան առաջին երկուսը միասին: Ի հարկէ, այս քիչ էր, եթէ ուշադրութեան առնենք, որ երրորդ դասը ժողովրդի խոշոր մեծամասնութիւնն էր կազմում այնինչ ազնւականութիւնն ու հոգեւորականութիւնն աննշան փոքրամասնութիւնն էին ներկայացնում: Ինչպէս էլ լինէր, երրորդ դասի ներկայացուցիչները բաւական էին, որ կշեռքի նժարն իրենց կողմը քաշէին: Բայց առաջին երկու դասերը պահանջում էին, որ ձայնատուութիւնը կատարւի ոչ թէ ըստ ներկայացուցիչների քանակի, այլ որ ամեն մի դաս, որպէս ամբողջութիւն, օգտւի միայն մի ձայնով: Այս բանը, հասկանալի է, լիովին համապատասխան էր ազնւականների և հոգեւորականների շահերին, որոնք միասին այսպիսի ձայնատուութեամբ կունենային երկու ձայն, այսինքն, մեծամասնութիւնը. բացի այդ, սա համապատասխանում էր հին հասարակութեան ոգուն, նրա դասերի բաժանման պետական-իրաւական ոգուն: Բայց ինչպէս այժմ բանւոր դասակարգը ձգտում է ոչնչացնել դասակարգերը, նոյնպէս և այն ժամանակ երրորդ դասը պահանջում էր ոչնչացնել դասերը, այսինքն, հասարակական շերտերի միջև եղած իրաւական պատնէշները: Նա ձգտում էր, որ լինի մի ժողովուրդ, որտեղ դասակարգային գանաղանութիւնները կախւած լինէին միայն գոյքային յարաբերութիւններից, բայց որտեղ ամենքը հաւասար լինէին օրէնքի առաջ:

Դասային Համաժողովը գումարւեց 1789 թւի մարտին, և իսկոյն մի կողմից երրորդ դասի և միւս կողմից՝ ազնւականութեան ու հոգեւորականութեան միջև վէճ ծագեց այն մասին, թէ դասերը պէտք է խորհրդակցեն ու

ձայն տան առանձին, թէ՞ միասին: Այս վէճը ձգձգւեց, և երկու կողմից ոչ մէկը չէր ուզում զիջել: Թագաւորը, — այն ժամանակ թագաւորում էր Լիւդովիկոս XVI, — ազնւականութեան ու հոգեւորականութեան կողմը պահեց, երրորդ դասակարգին հրամայեց խորհրդակցել առանձին, և վերջապէս, բռնութիւն դորձ դրեց, փակեց նրա նիստերի դարիւրներ: Բայց այսպիսով նա ընդգիծութիւնը չընկճեց: Երրորդ դասի ներկայացուցիչները հաւաքւեցին ուրիշ տեղ և յունիսի 20-ի յիշատակելի նիստին հետեւեալ երդումը արին. «Երդում ենք, որ երբէք չենք անշատւի Ազգային Ժողովից և գումարւելու ենք ամեն տեղ, ուր պահանջելու չինեն հանդամանքները, մինչև որ թագաւորութեան սահմանադրութիւնը հաստատւի ամուր հիմունքներով»: Երրորդ դասակարգի ներկայացուցիչներն իրենց Ազգային Ժողով անւանեցին, որպէսզի այսպիսով ցոյց տային, թէ նրանք իրենց համարում են բոլոր ազգի իսկական ներկայացուցիչներ և չեն ընդունում դասային բաժանում:

Սա յեղափոխութեան սկիզբն էր իսկապէս. ցոյց էր տալիս, թէ՛ բուրժուազիան չէր ուզում պետութեան ու ազնւականութեան քմահաճոյքին ենթարկւել, թէ՛ նա կարողանար եռանդուն կերպով պաշտպանել իր շահերը: Բայց պարզ է, որ երրորդ դասի մի քանի հարիւր ներկայացուցիչներն երբէք չէին յաղթի կառավարութեան, եթէ նրանց թիկունքին կանգնած չլինէր ամբողջ ժողովուրդը, ժանաւանդ Փարիզի հերոսական բանւորները և դիւղայիական մասսան: Ազնւականութիւնն ու հոգեւորականութիւնը, լաւ հասկանալով այս, վախեցան և զիջեցին: Ամենից առաջ, ունեւոր դասակարգի կողմն անցաւ մասամբ հոգեւորականութեան վարին խաւը, որ, ինչպէս մենք ասացինք, նոյնպէս անբաւական էր իր վիճակից, յետոյ մի քանի առաջաւոր ազնւականներ, իսկ վերջ ի վերջոյ ինքը թագաւորը՝ անհրաժեշտ ունեւոր դասակարգի եռանդուն վարձուներից, առա-

չին երկու դասերին հրամայեց միանալ Աղգային ժողովին: Սա բուրժուազիայի առաջին յաղթանակն էր և յետագայ յաղթութիւնների սկիզբը: Արածնեալներն զգում էին այդ և զայրանում իրենց հոգու խորքում: Նրանք սկսեցին մտածել այն մասին, թէ ի՞նչ նախնականութեամբ բուրժուազիային իր բռնած դիրքից շեղելու Արքունիքը կամայոցով սկսեց զօրք շարժել դէպի մայրաքաղաք ու սրա շրջակայքը: Իսկ Ֆինանսների նախարար Նեկիերը, — որին շատ էին սիրում նրա համար, որ նա առաջին անգամ Փրանսիայում յայտարարեց, թէ Ֆինանսները տխուր դրութեան մէջ են, արձակեց պաշտօնից: Պարիզի բնակչութիւնն այս բոլորն իմանալով՝ խորապէս վրդովւեց:

Երիտասարդ արի փառաբան Կամիլ Դեմուլէնը մի բողոքական ճառով զինեց վրդովւած ժողովին և զէնքի կոչեց: «Բարեկամներ, վերջացրեց նա, ազգանշանը տրւած է: Ահա, ոստիկանական խուզարկուները նայում են և սպառնում են ինձ: Բայց ես, յամենայն դէպս, կենդանի չեմ ընկնի նրանց ձեռքը»: Ապա զրդանից երկու ատրճանակ հանեց ու զխափերէր բարձրացնելով դռուց. «Թող բոլոր շիտակ քաղաքացիք հետեւեն իմ օրինակին»:

— «Ի զէ՛ն», — թնդաց Պարիզում: Երկու օր շարունակում էին պատրաստութիւնները, Կռում էին նիզակներ, մասնաւոր և պետական պահեստներից խլում էին զէնքը: Իսկ չիշատակելի օրը, 1789 թւի յուլիսի 14 ին մի միտք զբաւեց բոլորին, մի կոչ, — սպառնալի, մեծ, — տարածւեց Փրանսիայի մայրաքաղաքում. «Դէպի Բաստիլ»:

Բաստիլը մի մեծ, ամրացրած բերդ էր, որտեղից կարելի էր ուժեղացնել քաղաքի մի մասը և որը նշանակւած էր քաղաքական յանցաւորների բանտարկութեան համար: Այստեղ փակւում էին բոլոր նրանց, որոնք օրէ և է կերպ իրենց վրայ էին դարձնում թագաւորի, կամ նրա սիրելիների և սիրուհիների դժգոհութիւնը: Բաւական էր թագաւորի սիրուհու

մասին կատակով սասնաւոր զրել (ամեն թագաւոր բաղմաթիւ սիրուհիներ ունէր, և նրանց ամենաճարպիկները պետական գործերում մեծ ազդեցութիւն ունէին), որպէսզի հեղինակին թագաւորի զազանի հրամանով փակեն Բաստիլի զետնայարկում: Սովորաբար այնտեղ երկար մնալուց մարդիկ խելագարւում էին: Չարմանալի չէ, որ Բաստիլն ատելի դարձաւ Փարիզի բովանդակ բնակչութեանը: Նա ասես թէ թագաւորի անսահման իշխանութեան սիմվոլն էր, — որ կարող էր իր հպատակների կեանքի հետ վարւել ըստ իւր քմահաճոյքի:

Այսպիսով, Փարիզի բնակչութիւնը զեկափարւում էր զարմանալի հոտառութեամբ, երբ, բռնակալութեան դէմ կազմակերպւած հենց առաջին զինւած ընդհարման ժամանակ, յարձակեց Բաստիլի վրայ: Նա զէնք ունէր իր ձեռքում և նոյն խիզ զինարանից մի քանի թնդանօթ իւր խլել: Բերդապահ զօրքը սկզբում դիմադրում էր: Զինւորների շեշտակի զնդակները տեղն ու տեղը գլորում էին պաշարւածներին, այն ինչ վերջիններն անկարող էին վնասել բերդի պարսպի ետեւը թագնւածներին: Բայց սա ամբոխի կատաղութիւնն աւելի էր բորբոքում: Մէկը միւսի ետեւից իջեցնում էին շղթայաշէն կամուրջները: Հետզհետէ աճող ամբոխը յարձակւում էր աւելի ուժգնութեամբ, այն ինչ պաշարւածներին զբաւեց ոչ ոք օգնութեան չէր հասնում: Վերջապէս, զինւորները, չնայած բերդապետի դիմադրութեան, վնուեցին անձնատուր լինել: Ամբոխն ուրախ ազապակով բերդը խուժեց: Զինւորների կեանքը խնայեցին, մահապարտ եղան միայն բերդապետն և մի քանի չարագործներ, որոնք չէին զազարեցնում հրացանաձգութիւնը ժողովրդի դէմ: Բացի զրանցից արժանի պատիժ կրեց Փարիզի քաղաքապետը Ֆլեսսելը, նրա համար, որ պաշարման ժամանակ Բաստիլի բերդապետին, զրել էր հետեւելու. «Փարիզցիներին հանդստացնում եմ խօստումներով, մինչև երեկոյ դիմացէք, օգնութիւն կատանանք»: Նամակը գտան սպանւած բերդապետի ղեկստի մէջ և քա-

ղաքային խորհրդում կարգացին Ֆլեսսելի ներկայութեամբ: «Դէհ, դուրս եկէք, պարոն Ֆլեսսել,—այն ժամանակ օրան ասաց քաղաքացիներին մէկը,—«դուք մասնիչ էք. հայրենիքը ձեզ դէն է շարտում»): Երբ անպիտանը դուրս եկաւ հրապարակ, իսկոյն մեռած ընկաւ հրացանի շեշտակի գնդակից, պարակ, իսկոյն մեռած ընկաւ հրացանի շեշտակի գնդակից, Նրա գլուխը նիզակի վրայ ցցած ման էին ածում, և այսպիսի տեսարանին նայելիս, չեղափոխութեան բոլոր թշնամիների մազերը բիզ բիզ էին կանգնում:

Դրա փոխարէն, Փարիզում ժողովուրդը ցնծութեան մէջ էր: Ուրախ աղաղակներ ու երգեր էին լսում քաղաքում, ուր մի քանի ժամ առաջ կոչում էին որոտով. «Ի դէն, Բաստիլի դէմ»): Քաղաքը լուսավառւած էր: Մի քանի օրից չեւոյ Բաստիլն այլևս զոյութիւն չունէր: Նրան պետին հաւասարեցրին:

Բաստիլի առումը չեղափոխական ժողովրդի առաջին զինւած ընդհարումն էր կառավարութեան գէմ և խոշորագոյն չաղթանակը: Ժողովուրդը զգաց իր ոյժը և նշանակութիւնը: Ազգային ժողովի առաջաւոր մեծամասնութիւնը տոգորւեց աւելի համարձակութեամբ, որովհետեւ համոզւեց, որ նրա կողմն է չեղափոխական զօրքը: Այժմ նա վստահ կարող էր մտցնել Փրանսիայի բարձրաձայն պահանջած բարեփոխութիւնները:

III.

ՀԻՆ ԿԱՐՅԸ ՏԱՊԱԼԻՈՒՄ Է

Երբ Բաստիլի առման լուրը տարածւեց Փրանսիայում, ամեն տեղ ժողովրդի առաջին գործն էր վտարել քաղաքային և պետական նախկին աստիճանաւորներին, ընտրել չեղափոխական կոմիտէներ և զինուել: Ամեն տեղ կազմւեց ժողովրդական զվարդիա,—բաղկացած զինւած քաղաքացիներից,—որի նպատակն էր կարգ պահպանել և կարեւոր դէպքում դիմա-

գորութիւն ցոյց տալ կառավարութեան: Բուքստադիան չանում էր բանւորներին չթողնել ժողովրդական զվարդիայի մէջ, որովհետեւ արդէն այն ժամանակ նա սկսում էր ժողովրդից ահաբեկւել:

Շարժումը չսահմանափակւեց միայն քաղաքներով: Գիւղը, որ սկզբից ընկղմւած էր անգորութեան ու յուսահատութեան քնի մէջ, ցնցւեց քաղաքի բնակչութեան կոչից: Նրի մասնւեցին ազնականների զղեակները, կալւածատէրերի մօտ պահւած վաւերաթղթերը, զիւղացիական գերութեան այդ նախկին յուշաթերթերը ոչնչացրին: Գիւղացիք գաղաթեցին փնտրել ամեն տեսակ տուրքեր և ազատ հողատէրեր հուշակեցին իրենց: Այս խոշոր շարժումն այլևս անկարելի էր դադարել և տէրերը նախադասեցին ձեռնարկ թէ իբր նրանք իրենք էլ էին ուղղում նախկին արտօնութիւնները ոչնչացնել, միայն թէ չենթարկւեն ապարդիւն պայքարի վտանգին: Եւ ահա 1789 թւի օգոստոսի 4-ի գիշերն, Ազգային ժողովի նիստում միաձայն ոչնչացրին բոլոր հնացած ու վնասակար արտօնութիւնները, ինչպիսիք էին որսի իրաւունքը, տասանորդը, քաղաքների և գաւառների արտօնութիւնները, պաշտօնների վանառումը, համքարութիւններն և այլն. սահմանւեց հարկային հաւասարութիւն, իբրի կանոն ընդունւեց, որ ամենքը կարող են ամեն տեսակի պաշտօններ և տեղեր ստանձնել:

Բայց սա ահազին աշխատանքի սկիզբն էր միայն, որ պէտք է կատարւէր, որպէսզի Փրանսիական երկիրն ազատուէր հին աւերակներից ու մտցնէին նոր բուրժուական կարգեր: Պէտք էր սահմանել հարկատուութեան նոր հիմունքներ, արմատական կերպով փոխել դատարանն ու պաշտօնէութիւնը, որոշել հոգեորականութեան իրաւունքներն ու դիրքը և այլն:

Իսկ ամենից առաջ պէտք էր պարզօրէն որոշել թէ ինչպէ՞ս պիտի լինէին իշխանութեան զանազան ներկայացուցիչների փոխարարերութիւնները,—մի խօսքով, պէտք էր

Փրանսիայի համար սահմանադրութիւն ստեղծել, այսինքն, ստեղծել նրա քաղաքական կազմութեան հիմունքը:

Բուրժուազիան հանրապետութիւն չէր կամենում. հէնց ժողովուրդն էլ միայն աւելի ուշ համոզուեց, որ միակ քաղաքական կազմը, որով նա կարող էր ազատ զարգացնել իր ոյժերը, դեմոկրատիկ (աւանդաբանական) հանրապետութիւնն է: Այն ինչ, առաջին պահ ձգտում էին միայն սահմանադրական միապետութիւն հաստատել, այսինքն, որ թագաւորի իշխանութիւնը սահմանափակէր ժողովրդական ներկայացուցչութեամբ: Համաձայնում էին, որ թագաւորը գործադիր իշխանութեան ներկայացուցիչը լինէր. բայց միևնոյն ժամանակ, ինչպէս մի մասը՝ նրա իրաւունքների ամենաշատ սահմանափակման կողմնակից էին, միւսները ցանկանում էին ընդարձակել նրա իրաւունքները: Այսպէս, օրինակ, ոմանք ցանկանում էին, որ թագաւորն իրաւունք ունենար ընդունել կամ մերժել Ազգային ժողովի ժնիւները: Իսկ ժողովի մեծամասնութիւնը չէր ուզում համաձայնել, որ իր իրաւունքներն այսպէս չլուծ կերպով սահմանափակեն և վճռեց, որ թագաւորը կարող է միայն առժամանակ դադարեցնել պարամենտի (Օրէնսդիր ժողովի) ժնիւր: Այս զօրեղ անբաւարարութիւն առաջ բերեց ժողովրդի մէջ, որը պահանջում էր, որ թագաւորը ոչ մի մասնակցութիւն չունենայ օրէնսդրութեան մէջ:

Ընդհանրապէս այն ժամանակ արդէն բուրժուազիայի և հասարակ քաղաքացիների—պրոլետարիատի և մասամբ էլ մանր քաղընդներէ՝ միջև երկկողմիւն էր սկսւում: Բուրժուազիան իշխանութիւն ստանալով, աստիճանաբար մոռանում էր բանւորական մասսաներին, ցանկանում էր, որքան կարելի է աւելի օգուտ կորզել իր համար և ոչինչ կամ խիստ քիչ անել բնակչութեան ամենաբարձրագոյն ու ամենաբնական մասի համար: Այսպէս, 1791 թւին կազմւած ու հռչակւած սահմանադրութիւնը, չէր ընդունում բոլոր չափահաս քաղաքացի-

ների ընտրողական իրաւունքները, այլ այդ իրաւունքները պայմանաւորւում էին ողղակի տուրքերի որոշ չափով*): Ազգային ժողովը հանդիսաւորապէս հռչակեց «մարդու և քաղաքացու իրաւունքները»,—ուր բոլորին հաւասար ճանաչեց և սրա հետ միասին քաղաքացիներին բաժանեց երկու մասի ակտիվ,—այսինքն, նրանք, որոնք օգտւում էին ընտրողական իրաւունքից,—ու պասսիվ, այսինքն նրանք, որոնք զուրկ են այս իրաւունքից: Ժողովը «մարդու և քաղաքացու իրաւունքների» շարքն ընդունեց նոյնպէս ճշման դիմադրելու իրաւունքը, և սրա հետ միասին հռչակեց, այսպէս կոչւած, պատերազմական իրաւունքը, որի ուժով խառնակութեան ժամանակ զօրքը, երեք անգամ ցրւելու կոչ անելուց յետոյ, իրաւունք ունէր հրացան արձակել ամբոխի մէջ. ով այս դէպքում յանդգնէր դիմադրել, նա այս իրաւունքի զօրութեամբ պէտք է մահւան պատիժ կրէր:

Ձարմանալի չէ, որ ժողովուրդն արդէն սկսում էր դժգոհութիւն արտայայտել ոչ միայն թագաւորի, ազնւականութեան ու հոգեւորականութեան դէմ, այլ և ժողովից: Ժողովուրդը, սաստիկ տանջւում էր նաև աղքատութիւնից ու սովից: Յեղափոխութեան աւերած նախկին հասարակարգը, այնպիսի անկարգութիւն առաջ բերեց, Փրանսիան խորասուզեց այնպիսի դժբաղդութեան մէջ, որ անհնարին էր իսկոյն նրա վատ հետեւանքներից ազատել: Յեղափոխական յեղաշրջումն ըստինքեան առաջ բերեց մի շփոթութիւն, որի հետեւանքն այն էր, որ գործերը վատ էին գնում: Ձանազան սպեկուլիանտներ դէպքից օգտւում էին՝ պղտոր չրում ձուկ որսալու համար: Նրանք հացի մեծ պաշարներ էին ամբարում,

*) Ուղղակի տուրք կոչւում է այնպիսին, որ յերաւի տալիս է նա, ում սահմանւած է այս տուրքը, օրինակ, եկամտալին տուրք, անձնական տուրք և այլն: Անուղղակի տուրք վճարողը տալիս է, որպէս առաջին անհրաժեշտութեան պիտոյքների իսկական գների յաւելում: Ակցիզն ու մաքսերը անուղղակի տուրքերի զխաւոր տեսակներն են:

որ յետոյ յարմար ժամանակ, ծախէին բարձր գնով: Եւ անա-
յն ժամանակ երբ աղքատութիւնը աւերածութիւններ էր
գործում ժողովրդի մէջ, ժողովը չէր ձեռնարկում ոչ մի լուրջ
միջոցի, որ պրոլետարիատին աշխատանք, կամ հաց հասցնէր:

Փրանսիայում յարաբերութիւններն աւելի ու աւելի
յարուում, աւելի ու աւելի սրւում էին:

Թագաւորն ու նրա պալատականները սաստիկ դժգոհ
էին միապետական իշխանութիւնը սահմանափակելուց, «փաս-
տաբանների» ու «խուժանի» վարչութիւնից: Անուանում
թիւնը, որ ըստ երևոյթին, յօժարակամ համաձայնել էր իւր
արտօնութիւնները ոչնչացնելուն, հողու խորքում վրէժ-
խնդրութիւն էր թաղցրել ատելի քաղքենու և ժողովրդի
դէմ: Բաստիլի առումից անմիջապէս յետոյ մի քանի արիստո-
կրատներ, ժողովրդի յաղթանակը տեսնելով, արտասահման
փախան: Այս արիստոկրատական էմիգրացիան, քանի զնում,
աւերանում էր յեղափոխութեան շնորհիւ: Էմիգրանտները
Եւրոպայի արքունիքները ցրւեցին, յեղափոխութեան դէմ
դաւաճանութիւններ էին նիւթում, թագաւորոգ անձանց հա-
մոգում էին պատերազմ յայտարարել իրենց սեպհական հայ-
րենիքին: Հոգևորականութիւնը կատաղել էր տասանորդը
ոչնչացնելու և բոլոր վանքական ու եկեղեցական կալւածները
տէրութեան սեփականութիւն յայտարարելու պատճառով:
Այս կալւածներն, ինչպէս աւելի ուշ, էմիգրանտների—երկրի
դաւաճանների—գոյքերը ժողովրդական սեփականութիւն
հռչակեցին: Հոգևորականութիւնը պէտք է ոռնիկ ստանար
պետութիւնից և բացի այդ, պէտք է երգէր հուատարիմ լինել
յեղափոխութեան: Այս գիտով, բուրժուազիան կամենում էր
հոգևորականութեան, որպէս առանձին տիրոջ դասակարգի,
զօրութիւնը տապալել և նրան աշխարհիկ իշխանութեանը
ենթարկել:

Փարիզի բնակչութիւնն ուշադրութեամբ հսկում էր ար-
քունիքին, որն Ազգային ժողովի հետ գտնւում էր Վերսալ-

լում, Փարիզի մօտիկ աւանում: Արդէն 1789 թւի հոկտեմ-
բերին թագաւորի ու նրան շրջապատողների վարմունքը սաս-
տիկ անբաւականութիւն յարուցեց Փարիզցիների մէջ:
Պատմում էին, թէ Վերսալում խնճովին սպաները կոխկրտում
էին ժողովրդական դրօշակը, որ յեղափոխութիւնն էր ստեղ-
ծէր «Վերսալյ, Վերսալյ»,—հնչեց Փարիզում, այս լուրը տա-
րածւելուն պէս:

Իսկոյն ամբողջ հաւաքւեց, մեծ մասը կանայք, ժողո-
վրդական զվարդիան միադաւ ամբոխին: Դեռ թագաւորի
նկատմամբ վատ մտադրութիւններ չկային, միայն կամենում էին
տեղաւորել նրան Փարիզում, որպէսզի աւելի դիւրին լինէր
հսկելը. ոմանք էլ միամտաբար կարծում էին, որ՝ եթէ թա-
գաւորը վերադառնար Փարիզ, հացը կէժանանար: Իր աղքա-
տութեան պատճառը դեռ այժման քիչ էր գիտակցում ժո-
ղովուրդը:

Կանանց ներկայացուցիչները զնացին թագաւորի մօտ,
որ Պարիզի բնակչութեան դրութիւնը նկարագրեն նրան:
Ուղարկւածներէից մէկը, որ պէտք է ճառ ասէր, այնքան
տանջւած ու մաշւած էր, որ հազիւ կարողացաւ միայն բա-
ցականչել. «Հա՛ց»,—և ուշաթափ զլորւեց: Թագաւորը բար-
ձրացրեց նրան, համբուրեց և խոստացաւ այն ամենն, ինչ որ
նրանից պահանջում էին: Բարեհոգի կանայք դուրս եկան
ազազակելով. «Կեցցէ՛ թագաւորը»:

Բույց պահանջը, որ թագաւորն իսկոյն տեղափոխւի
Փարիզ, դրւած էր վճռական: Լիւդովիկոս XVI ուղում էր
փախչել, բայց ժողովրդական զվարդիան նրան բռնեց: Կամայ,
ափամայ, անհզին ամբոխով շրջապատւած, նա պէտք է վե-
րադառնար Փարիզ, իբր ամբոխի զերին: Այս շքախմբի
ետեից բերում էին 60 կառք ալիւր, իսկ կանայք ուրտիս ծի-
ծաղում էին. «Մենք տանում ենք»,—ասում էին նրանք,
«հացթուխին, հացթխուհուն և հացթխիկին», աչսպէս էին
անւանում թագաւորին, թագուհուն և թագաժառանգին:

Թագաւորի հետ Փարիզ տեղափոխւեց և Աղգային Ժողովը:

Բայց Թագաւորը, որին ազատեց Ժողովրդի բարեհոգութիւնը, ոչ միայն չհաշտւեց նրա հետ, այլ աւելի ու աւելի մտածում էր, որ ազատւի նրանից ու նրա հսկողութիւնից: Աղգային Ժողովի վճիռներն աւելի էին զրգուում Թագաւորի անբաւականութիւնը: Նա հաստատում էր այս վճիռները նկատելի անբաւականութեամբ, իսկ երբեմն էլ հէնց ուղղակի մերժում էր: Մանաւանդ վրդովւած էր եկեղեցական կալածները խելիւ պատճառով, և առհասարակ նրան զայրացնում էր հոգեւորականութեան դէմ բռնած դիրքը: Դրա հետ միաժամանակ հետզհետէ աճում էր և Ժողովրդի թշնամական տրամադրութիւնը Թագաւորի դէմ: Ժողովուրդը քիչ քիչ համոզւում էր, որ քանի զոյւթիւն ունէր Թագաւորական գահը, տէրութեան ամենաբարձր պետը՝ մշտական սպառնալիք է լինելու Ժողովրդի և ազատութեան համար, մշտական զաւադիր սեպհական հայրենիքի դէմ:

Վերջապէս, Թագաւորն իւր մերձաւորների զրգմամբ, վճռեց փախչել արտասահման, Փրանսիայի թշնամիների մօտ: Դուրս գալուց առաջ, նա պալատում նամակ թողեց, որով յայտնում էր, թէ գնում է, որովհետեւ սահմանադրութիւնը խիստ քիչ իշխանութիւն է թողել նրան, որովհետեւ խիստ քիչ ռոնիկ (40 միլիոն ֆրանկ) էր ստանում և որովհետեւ, վերջապէս, նրան չափից դուրս վերահսկում են ու չեն հաւատում: Նա պայմանաւորւեց ամենահաւատարիմ սպաների հետ. վերջիններս պէտք է զօրքի փոքրիկ խմբեր շարէին ճանապարհին. որով նա վճռել էր փախչել: Իսկ սահմանից ոչ հեռու նրան պէտք է սպասէին զինւորական մեծ ուժերը: 1791 թւի յունիսի 20-ի լոյս 21-ի գիշերը Թագաւորը մերձաւոր ազգականների հետ միասին փախան պալատից և նստան ահագին կառք, ուր զիտմամբ բարձել էին մի քանի օրւայ պաշար, որպէսզի ճանապարհին կարիք չունենային դուրս գալ: Փախուստը կյաջողւէր, եթէ մի աւանում երկառօտորդ

ու եռանդուն լեղափոխական Դրուէն, պոստապետի որդին, գիշերը չճանաչէր Թագաւորին: Առանց մի բոպէ կորցնելու, նա մի ընկերոջ հետ միասին գնաց հարեան աւանը, որտեղից Թագաւորը պէտք է անցնէր. քաղաքից դուրս գտնւող կամուրջի առաջը փակեցին և խկոյն դարձեցրին քաղաքային իշխանաւորներին: Վերջինները կառքը բռնեցին և անցաթուղթ պահանջեցին: Թագուհին ցոյց տւեց ոմն իշխանուհու անցագիր, որի մէջ վկայւում էր, որ նա ճանապարհորդում է որդու և սպասաւորի հետ: Սակայն աստիճանաւորները Թագաւորին ու ընտանիքին հրամայեցին դուրս գալ. այդ ժամանակամիջոցին զանգերը խփեցին, գիւղաքաղաքի բնակիչները դարձեցին և շրջապատեցին այն առնելու, ուր ձերկիւնները դարձեցին և շրջապատեցին այն առնելու, որ իրեն զվարդիա պահանջեցին: Երբ Թագաւորը տեսաւ, որ իրեն ճանաչեցին, ոսկէ սարեր խոստանալով սկսեց աղաչել, որ թոյլ տան ճանապարհը շարունակել: Սրան չհամաձայնեցին և Թագաւորը, շրջապատւած տասնեակ հաղարաւոր Ժողովրդական զօրքերով, պէտք է քոր ու փոշման վերադառնար Փարիզ: Նախնալի է, որ «իր» Ժողովրդից փախչող և իր հայրենիքի թշնամիների մօտ գնացող Թագաւորին, պէտք էր խհոյն դատի ենթարկել և գահից զրկել: Հէնց այս էլ պահանջում էր Ժողովուրդը, որ աւելի ու աւելի քիչ համակրուութիւն և յարգանք էր տաժում դէպի Թագաւորը: Բայց բոլրժողովան ու նրա ներկայացուցիչները Աղգային Ժողովում ուղում էին, ինչ էլ որ լինի, պահել Թագաւորի իշխանութիւնը, որովհետեւ վախենում էին, թէ հանրապետութեան մէջ Ժողովուրդը խիստ մեծ նշանակաւթիւն կստանայ: Ահա թէ ինչու Թագաւորին հանգիստ թողեցին:

Բոլոր ազնիւ քաղաքացիները վճռեցին խնդիր ուղարկել Ժողով, որ նա Թագաւորին դատէր, որպէս մասնիչի: Այս նպատակով պէտք է Փարիզի Մարտեան զաշտում (հրապարակ Պարիզում) Ժողովւէին և այնտեղ այս դէպքի առթիւով

կառուցած («Հայրենիքի Սեզանի») վրայ խնդիր ստորագրելին։ 1791 թվի յուլիսի 17 հրապարակը ժողովեցյին մօտ 12 հաղար մարդ։ Խնդիրը սկսեցին ստորագրութիւններով լցնել։ Յանկարծ երեացին զօրքն ու արխատոկրատ ընտանիքներից մեծ թւով կամաւորներ։ Գաղութապետը «պատերազմական իրաւունքի» հիման վրայ, որի մասին մենք արդէն խօսել ենք, կարմիր դրօշակ կախեց և ամբօխին հրամայեց ցրւել։ Ժողովուրդն ապշեց, որովհետեւ ոչ մի անկարգութիւն չէր եղել ոչ ոք նոյն իսկ զէնք չունէր։ Յանկարծ հրաման լսւեց՝ «պարպի՛ր»։ Զօրքը հրամանը կատարեց և հրապարակը ծածկեց զիախներով ու վիրաւորներով։ Սպանւեցին երկու հարիւրից աւելի մարդիկ, վիրաւորւածներն աւելի շատ էին։

Մենք տեսնում ենք, թե բուրժուազիան կամ սրա գոնե մեծ մասը ինչպե՞ս ժողովրդի դեմ զարձաւ, սրն իր ուսերի վրայ նրան իշխանութեան գազաթը բարձրացրեց: Բուրժուազիան ուզում էր հնարաւորութեան չափ շուտ վերջ տալ յեղափոխութեանը, կտրգն ամբաստնել, ինչ որ նրան հնարաւորութիւն կտար հանգիստ գործով զբաղւելու և օգտագործելու յեղափոխութեան ձեռք բերածը: Բայց ժողովուրդը խիստ զրգուած էր, խիստ քիչ էր շահւել, որ հանգստանար և խոնարհութեամբ դիմանար նոր աէրերի կապիտալիստների և սրանց սպասուորների իշխանութեան: «Յեղափոխութիւնը պէ՛տք է լրացւի», ասում էր Դանտօնը, այն ժամանակալ ամենաաչքի ընկնող մարդկանցից մէկը, որ մտտանների վրայ ահագին ազդեցութիւն ունէր: Անհրաժեշտ էր յեղափոխութիւնը լրացնել, չէ՞ որ ժողովուրդը քաղցած էր, Թագաւորը մնում էր զահի վրայ, իսկ Փրահսխայի ներսն ու դուրսը զաւադրութիւններ էին սարքուում յեղափոխութեան դէմ:

Ազգային ժողովրդ, երկու տարուց աւելի աշխատանքից
յետոյ, իւր տեղը զիջեց Օրէնսդրական ժողովին, որ ընտրւած
էր՝ նոր սահմանադրութեան հիման վրայ Ֆրանսիան թափա-
ւորի հետ միասին կառավարելու համար: Բայց թափաւորը,

չնայած իւր գառն փորձին, ամենեւին մտադիր չէր հաշտել իւր կարգերի հետ: Նա չէր դադարում գաւաղրութիւններ սարքել տեղական, կամ արտասահման փախած ազնւականների հետ միասին: Նա կարօտով սպասում էր այն մոմենտին, երբ Եւրոպայի կայսրներն ու թագաւորները, մատնիչներով Պրանսիական ազնւականների օգնութեամբ իրենց զինուորները կհանեն Պրանսիայի դէմ: Նրանք հարկադրւած չեղան այս մոմենտին երկար սպասել: Եւրոպական թագաւորները դուրս եկին իրենց զահերի վրայ լեղափոխութեան արիւնտաւորականի առաջ: Պրանսիական լեղափոխութիւնն ամբողջ եւրոպայում ահագին ազդեցութիւն գործեց: Բոլոր նախկին կարգերից անբաւականներն ու առաջաւոր մարդիկ արիւթեան հոսանք զգացին, սպասելով, որ Ֆրանսիական ժողովուրդն օգնութեան ձեռք կպարզէր նրանց՝ բռնաւորների դէմ կռւելու: Լեղափոխութեան օջախը հանգցնելը դառաւ եւրոպական թագաւորների կարեւորագոյն նպատակը: Պէտք է աւելացնել, որ Պրանսիայում ժողովրդի իսկական բարեկամները, որ կուչում էին Եակոբիններ (որովհետեւ նրանց կուրբ ժողովուրդ էր Սուրբ Յակովբայ նախկին վանքում), պատերազմի դէմ էին, այն ինչ թագաւորը՝ կողմնակից էր նրան. նա յօրս ունէր, թէ թշնամին՝ իւր լեղափոխական զօրքը, որին արհամարհանքով անւանում էր «փաստաբանների զօրք» կըրէ առանց դժարութեան: Բայց խեղճը սխալեց: 1792 թ.ի մայիսին նախ

Պատերազմը չիրաւի բռնկեց 1792 թւի մայիսին Նախ
Պրուսիայի ու Սւստերիայի, յետոյ զրեթէ ամբողջ միապետա-
կան (Թագաւորների կառաւարած) Եւրոպայի զէմ. հեռու
Պետերբուրգն անգամ միացաւ զաշնակէյներին յեղափոխու-
թեան զէմ ու այս ժամանակները յետոյ պաշտօնական Ռու-
սաստանն սկսաւ առաջ զալ որպէս եւրոպական ընկեցիայի
նեցուկ։ Հասկանալի է, որ պատերազմի պտտտառով Թըշ-
նամական վերաբերմունքը զէպի Թագաւորը՝ պիտի աճէր։
Թագաւորն ինքն էր տալիս անբաւականութեան նորանոր

կեղտոտ, շտհախնդրական նպատակներն ծարաւով, ինչպէս
այդ անուամբ են իշխող դասակարգերը:

Այս իշխելի օրը սպանւեցին ու վիրաւորւեցին մօտ
3 հազար մարդ յաղթուածների և յաղթողների կողմից:

Ժողովրդի յաղթութիւնն ահագին նշանակութիւն ունէր:
Օրէնսդրական ժողովը չէր կարող արդէն դանդաղ շարժել:
Նա յայտարարեց, որ թաղաւորը զրկւած է իր պաշտօնից,
և վճռեց տեղի ալ նոր պարլամենտի առջև, որ պիտի առ-
ւանէր Արքային Կոնվենտ: Ու թէ 1791 թւի սահմանա-
դրութիւնն ասում էր, թէ՛ ոչ բոլորն բնորոշական իրաւունք
ունեն, բայց, վերջին դէպքերի շնորհիւ, ոչ ոք չէր համար-
ձակւում այս կանոնը դորժապրել: Կոնվենտի բնորոշութիւն-
ները տեղի ունեցան ընդհանուր ձայնատուութեան հիման
վրայ:

Այդ միջոցին, կարելի է ասել, բարձրագոյն իշխանու-
թիւնն անցաւ Փարիզի յեղափոխական կոմմունայի (համայնքի)
ձեռքը: Սա էր, որ հրամայեց բանտարկել թաղաւորին և ծրա-
րնատնիքին ու բազմութիւն ձերբակալութիւններ արեց. բան-
տարկւեցան թշնամու հետ յարաբերութիւններ պահպանող
շատ ազնւականներ ու քահանայք, ինչպէս նաև զբաղմունք-
ներ: Փարիզի Կոմմունան ոչ միայն կարգն էր պահպանում
քաղաքում, այլ և դեռ բոլոր եռանդով զբաղւած էր ժողո-
վուրդը զինելով ու զինւորական մասեր պատերազմի ուղար-
կելով թշնամու դէմ:

«Հայրենիքը վտանգի մէջ է»: Այսպիսի աղաղակ բու-
ճրացաւ ամբողջ Ֆրանսիայում, երբ թշնամին պատերազմի
սկիզբը մի քանի յաղթութիւն տարաւ: Թշնամին մտաւ
Ֆրանսիա, տիրեց միջանի բերդ և անցնում էր երկրի խորքը:
Երբ սա յայտնի դառաւ, կատաղութիւնը և յուսահա-
տութիւնը տիրեց փարիզեցիներին: «Մի՞թէ այս օտարեր-
կրեայ հրոսակները ոտնակոխ կանեն մեր զեղեցիկ երկիրը:
Ո՛չ, հարիւրապատիկ աւելի լաւ է մեռնել»: Քաղաքային

խորհուրդը կոչով դիմեց զինւած քաղաքացիներին, որ սօքա
հենց հետեւեալ օրը դուրս գան թշնամու դէմ: Դանտոնը, որ
այն ժամանակ նախարար էր դարձած, Օրէնսդրական Ժողո-
վին դիմեց մի վառվռուն ճառով. «Մենք պահանջում ենք,
—ասում էր նա, ի միջի այլոց,—որ ամեն ոք, ով չի ուզում
հայրենիքին ծառայել, մահւան պատիժ կրէ, որ նոյնպիսի պա-
տիժ հասնի ամեն մէկին, ով ուզողակի, կամ անուղղակի կեր-
պով կհրաժարւի կատարել գործադիր իշխանութեան կար-
գադրութիւնները, կամ արդելք կլինի նրան: Թշնամուն յաղ-
թելու համար, մեզ պէտք է արիութիւն, էլի արիութիւն և
միշտ արիութիւն,—և Ֆրանսիան կազատւի»: Ժողովն ըն-
դունեց նրա բոլոր պահանջները և սոցա օրէնքի ոյժ տւեց:

Մէկ միտք էր զրգուում Փարիզցիներին,—մանաւանդ
նրանց, որոնք թշնամու դէմ էին գնում,—սարսափելի զայ-
րոյթ: «Ի՛նչպէս» —ասում էին նորա,— «Մենք գնում ենք,
մինչդեռ քաղաքում մնում է մասնիչների բազմութիւնը:
Ո՛չ, մենք այս չենք թող տալ»:

Մենք արդէն ասել ենք, որ՝ քաղաքային բանտերում
նստած էին բազմութիւն ազնւականներ և քահանաներ: Նոցա
գէտ ուղղւեց փարիզցոյ վրէժը: Հոկտեմբերի 2-ին ամբո-
խար խուժեց բանտերը և սկսեց սպանել ոճրագործներին:
Սկզբում սպանում էին առանց որևէ դատաստանի: Բայց մի
քանի ժամից յետոյ կազմեցին ժողովրդական դատարան, որ
նախ քննում էր մեղադրւածների ոճիրները, յսում էր նոցա
պաշտպանութիւնը և միայն այնուհետև վճիռ կայացնում:
Այսպէս շատերն ազատւեցին մահից: Ընդամենը այն օրը մե-
ռան մօտ հազար մարդ:

Մի քանի օրից յետոյ, 1792 թւի հոկտեմբերի 20-ին,
Ժողովեց Կոնվենտը: Նրա առաջին գործն եղաւ յայտարարել
թէ թաղաւորական իշխանութիւնը դադարում է գոյութիւն
ունենալուց, և Ֆրանսիան հասարակապետութիւն է դառնում:
1792 թ. հասարակապետութեան առաջին տարին էր:

IV.

ՀԱՍՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Այժմ ամենքին զբաղեցնում էր մի հարց՝ ի՞նչ անել թագաւորին: Ի հարկէ, այժմ արդէն ոչ մի կտակած չկար, որ նա պէտք է դատի ենթարկւի: Բայց ո՞վ նրան պէտք է դատէր: Լիւդովիկոս XVI կտաւարած ոճիրները սովորական դատի ենթարկւած մահաւոր մարդու ոճիրներ չէին: Լիւդովիկոսը թագաւոր էր, — պէտք է ներկայանար այն իշխանութեան դատին, որ նրան զահից վայր ձգեց, — սղղապին ներկայացուցչութեան դատին, հետեապէս Կոնվենտի դատին: Այսպէս էլ վճռեց Կոնվենտը: 1792 թվի գեկտեմբերի 11-ին սկսեց Լիւդովիկոս Կայստի (Կայստ — թագաւորի սղղանունն է) հարցաքննութիւնը: Դատն երկար ձգձգում էր: Պատմութեան տարեգրութիւնների մէջ նա նշանաւոր էջ է բռնում: Ազատ ժողովրդի ներկայացուցիչները դատում էին այնտեղ ճնշման և բռնակալութեան ներկայացուցչին. կարելի է ասել, որ դատն ուղղւած էր ո՛չ թէ թագաւորի դէմ, քանզի մարդու, այլ միապետական իշխանութեան սկզբունքի դէմ:

Ժողովուրդը փափազում էր Լիւզովիկոս Կապետի մահը։ Բայց Կոնվենտում բոլորը չէին այս պահանջի կողմը. Յշմարիտ է, ոչ ոք չէր համարձակուում Լիւզովիկոսին անմեղ ճանաչել։ Բայց շատերն ուզում էին մահաւան պատիժը փոխարինել բանտարկութեամբ, կամ աքսորով։ Սակայն, այն կարծիքը, թէ Լիւզովիկոսը արժանի է մահաւան պատժի, չաղթւեթին անտարաւ... Զայնատուութեան հետեւանքը յայտարարւելուց առաջ, Սպանիայի Թագաւորից նամակ ստացուեց, որ յայտնում էր, թէ՛ եթէ նրա ազգական Լիւզովիկոսի կէտքը շնորհիւ, նա չի միանայ դաշին՝ Փրանսիայի գէմ։ Դանտոնն եռանդուն

կերպով պախարակեց Սպանիայի թագաւորին նրա յանդգնու-
թեան համար, որ փորձում էր ճնշում գործադրել ժողովի
վնդի վրայ: Հէնց այդ մէկ պատճառով պէտք էր, որ Սպա-
նիային պատերազմ չաշտարարէր: Չենք ընդունում բռնա-
կալութեան հետ բանակցութիւններ, — աղաղակեց նա: Դան-
տոնի ճառից յետոյ, Կոնվենար, մերժելով Սպանիայի թագա-
ւորի նամակը, անցաւ հերթական գործերին: Չայնէրը հաւա-
քելուց յետոյ նախադահը չաշտարարեց:

«Ազդդային Կոնվենտի անւամբ յայտարարուժ հմ, թէ նրա վնիւն է, Լիւղովկիոս Կապետին մահւան պատժի Լնթարկէն»։ Այս բառերից յետոյ տիրեց հանդիսաւոր խորին լռութիւն։ Վնիւն իրադործեց 1793 թւի յունւարի 21, առաւօտաւայ Ժամբ 10-ին։

Երբ լժաղաւորի կտրւած զլուխը ցոյց տւին ամբօխին, բոլորի կրծքերից զուրս թռաւ մի աղաղակ. «Կեցցէ՛ հասարակապետութիւնը»: Ժողովուրդը և դօրքը զրեթէ ամբողջ Պրանսիայում հրճւանքով կրկնում էին այս աղաղակը: Հասարակապետութիւնը զէմ առ զէմ հանդիպեց ահազին արդեւթնների, որոնք միշտ աւելի և աւելի էին աճում: Պրանսիային մեծ վտանգ էր սպառնում թէ զրսից, — արտաքին թշնամուց, — թէ ներսից, ինդափոխութեան թշնամի կուսակցութիւններից ու անտեսական դրութեան վատ պաշտաններից:

Մենք արդէն ասացինք, որ Ֆրանսիայի դէմ դուրս եկան գրեթէ բոլոր միապետական պետութիւնները: Նոքա յոյս ունէին, թէ՛ հեշտ կլինի մի երկրի հախից լզար, ուր իշխում էր լեզափոխական շարժումը: Բայց ուղղակի հակառակը դուրս եկաւ, հոօր լեզափոխութիւնը, որ արմատապէս փոխեց նախկին հասարակական-քաղաքական կազմը, — աւաւ Ֆրանսիական ժողովրդին անհազին ոգևորութիւն և հաւատ զէպ ինքզինքը: Հասարակապետութիւն կազմիլու բոպէից մանաւանդ, ժողովուրդը անյաղթ դառաւ: Զէ՛ որ այժմ նա կառավարում էր ինքն իրեն, — նշանակում է, — ոչինչ չէր

ճնշում նրա եռանդը: Պաշտպանելով իր հայրենիքը, ժողովուրդը պահպանում էր իր ազատութիւնը, իր վաստակները և լաւագոյն ապագայի յոյսերը:

Այս պատճառով նա ժողովւում էր ահադին բազմութիւններով և գնում պատերազմ: Այն ժամանակ յորինւած յեղափոխական երգը, — որ Մարսելիօզ է անւանւում, նրա մէջ հրահրում էր բոցը: Այս երգը իր բերանում, ժողովուրդը, որպէս որոտ, յարձակւում էր թշնամու վրայ, մահացնում նրան, կամ քշում Փրանսիայի սահմաններէն հեռու:

Գրանդիոզ նպատակն իրագործելու համար տեղական իշխանութիւնները պէտք է ժողովրդի հետ կատարեալ միաբանութիւն ունենային, նրա զգացմունքով զգային, նրա մտքերով մտածէին, նրա ոգևորութեամբ բորբոքւէին: Իշխանութիւնները պէտք է առաջնորդէին ժողովրդին, աշակցէին նրա մտադրութեանց, միացնէին բոլոր ժողովրդական ճիգերը և ուղղէին նրան դէպի մի նպատակ:

Զարմանալի չէ, որ այս սպառնալի բոլորներից առաջ ընկան եռանդուն, իսկական յեղափոխականներ, զործին անկեղծօրէն նւիրւած տարրեր: Միայն այս տարրերը կարող էին ազատել Փրանսիան:

Բայց հասարակապետութեան սպառնում էին ոչ միայն արտաքին թշնամիները և սրա հետ միացաժ ագնական էմիգրանտները: Նոյն իսկ Փրանսիայում ապստամբութիւն բռնկեց յեղափոխութեան դէմ. հէնց ամենից յետ մնացած գաւառում, Վանդեում: Այս գաւառում խիստ քիչ քաղաքներ կային, արհեստները և վաճառականութիւնն ածման ամենաստորին աստիճանի վրայ էին, ճանապարհները զգուշի, լուրերը խիստ ուշ ուշ էին հասնում հեռու — աշխարհից: Զարմանալի չէ, որ զիւղացին այստեղ ամենախաւարն էր, ամենից աւելի հպած իր քահանաներին և թաղաւորին, որին և պաշտում էր Ասածու տեղ: Յեղափոխութիւնը Վանդեացի գիւղացու վրայ ցնցող և խիստ անդուրեկան տպաւորութիւն գործեց, որովհետև ոչնչացրեց

ամեն ինչ, որ նրա համար սուրբ, հարազատ և սովորական էր: Այստեղ ագնականութեանն ու հողերականութեանը հեշտ էր զրգուել գիւղացոյց ' գինեկ նրանց հասարակապետութեան դէմ, որ թագաւորին մահւան զատապարտի, և ոչնչացրեց, կամ սահմանափակեց հողերականութեան իրաւունքները: Թէև միայն Վանդեում գործը հասաւ յեղափոխութեան դէմ խոշոր ապստամբութեան, բայց և մի քանի ուրիշ տեղերում կային մարդիկ, որոնք հասարակապետութեան չէին համարում և նրա դէմ դաւադրութիւններ էին կազմում: Մի քանի քաղաքում հին կարգերի կողմնակիցները և ժողովրդական վարչութեան հակառակորդներն անկարգութիւններ առաջ բերին: Յեղափոխականները, — ժողովրդական զործին անձնատուր եղած մարդիկ, — թաղաւորական իշխանութեան կողմնակիցներից ենթարկւում էին յարձակման և սպանութեան վտանգին: Այսպէս մեռան ի միջից այլոց արի և աչքի բնկնող «ժողովրդի բարեկամ» Մաբան ու Կոնվենտի անդամ Լեպելլէ:

Կարօտութիւնը և սովոր միշտ աւելի և աւելի է ծանրանում ժողովրդի վրայ: Մենք արդէն ցոյց տւինք սրտ պատճառները, այժմ աւելացնենք, որ պատերազմը, որ միշտ ընդհատում է զործերի ընթացքը և խանդարում հացի մատակարարումը, էլ աւելի վատացրեց այս զրութիւնը:

Կրկնում ենք, զրութիւնն ահարկու էր, և միայն անընկճելի, երկաթեայ եռանդը, միայն բոլոր ոյժերի լարումը կարող էին փրկել Փրանսիան: Այս եռանդը գտնւեց, ժողովրդի ոյժերը ազատօրէն հրապարակ եկան, և Փրանսիան ազատւեց:

Զօրը հաւաքելու համար, որ կարողանար դուրս գալ թշնամու դէմ, Կոնվենտը հետեւեալ վճիռը հրատարակեց. «Մինչ թշնամու դուրս գլուկը Փրանսիայից, բոլոր Փրանսիացիք պէտք է պատրաստ լինեն զինւորական ծառայութիւն յանձն առնելու, երիտասարդութիւնը կզնայ պատերազմելու, ամուսնացածները զենք կկրեն ու մթերք կհասցնեն, նոցա

ամուսինները վրաններ կշինեն, շորեր կկտրեն և հիւանդանոցներում կծառայեն, զաւակները կտորներով թելեր կըրրեն, ծերերը կհրահրեն պատերազմելու, կներշնչեն ատելոյ թիւն թագաւորների դէմ մի կողմից և հասարակապետութեան միութեան սկզբունքը՝ միւս կողմից:

Զօրքի վրայ մշտական հսկողութիւն ունենալու համար, Կոնվենտը նշանակեց զօրքին կից քաղաքացիական կոմիսարներ, որոնք համարուում էին ժողովրդի ներկայացուցիչներ և օժտուած էին մեծ իշխանութեամբ: Հէնց ևս որքա էլ պէտք է հետեւէին, որ սպաները լաւ վարուէին զինւորներին հետ և նեցուկ չլինէին հասարակապետութեան թշնամիներին: Նրանք զեկուցանում էին Կոնվենտին զօրքի դրուութեան և սպաների վարմունքի մասին: Եթէ որեւէ գէներալ յանցաւոր էր, ոչ միայն մատնութեան, այլ թէկուզ թուրութեան կամ թեթեւամտութեան մէջ, նրան անսնայ մահով էին պատժում: Հասարակապետութեան դէմ գործող ապստամբների—ազնականների նկատմամբ առհասարակ ամենայն խստութեամբ էին վարուում: Այսպիսի քաղաքականութիւնը տեւուր են անւանում, այսինքն ահաբեկում: Բուրժուական պատմիչները հենց այդ պատճառով էլ չեն կարող հաշուել լեղափոխականների հետ, որ սորա ժողովրդի թշնամիների և հին կարգերի կողմնակիցների գլուխները կտրուում էին: Այս պարոնները ոչինչ չունեն նրա դէմ, թէ՛ ունեւորները հարեւրներով և հաղարներով շարդում էին բանւորներին 1848 թւի յունիսին և 1871 թւի մայիսին: Նրանք վրդովուում են միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը վրէժ է հանում իրեն հասցրւած վիրաւորանքների համար, կամ մահով պատժում է ինքնապաշտպանութեան համար: Հենց յատկապէս այն ժամանակ, լեղափոխութեան ժամանակ, ժողովուրդը պէտք է պաշտպանւէր իր բոլոր ոյժերով: Եթէ լեղափոխութիւնը մահով չպատժէր իր թշնամիներին, նա ինքը մահւան զոհ կգնար: Արեւելքի բժշկուում դեղով, այն բժշկուում է երկաթով: Ինչ չէ

բժշկուում երկաթով, բժշկուում է կրակով»: Կրակով և երկաթով էր մնում բժշկել Ֆրանսիան...

Հասարակապետութիւն մտցնելուց յետոյ լեղափոխութիւնը խիստ էր վարուում ոչ միայն ազնականութեան, այլ և առհասարակ հարուստների հետ: Հարուստ բուրժուազիան լեղափոխութեան կողմնակից էր միայն այնքան, որքան այդ համապատասխան էր իր շահերին: Բայց նա հակառակ էր ժողովրդական հանրապետութեան: Նորա չէին ուղղում զոհ յանձն առնել հայրենեաց համար, նոյա ստիպել պէտք էր: Կոնվենտը վճեց մի միլիարդ ֆրանկ հարկ նշանակել հարուստների վրայ: Փոքր կաքերն աղաւ էին այս հարկի: Իսկ մեծերի նկատմամբ սահմանւած էր պրոգրեսիվ հարկ,—այսինքն, ով որքան աւելի հարուստ էր, այնքան էլ աւելի տոկոս պէտք է վճարէր իր կալքից: Ժողովրդի վիճակը գէթ մի քիչ լաւացնելու համար՝ Կոնվենտը սահմանեց, որ որոշւի հացի ամենաթանկ դինը, որից աւելի կարելի չլինէր պահանջել: Այսպիսով ուղղում էին, որ սպեկուլյանտները, օգտւելով հացի մեծ պահանջից, արհեստական կերպով գները չբարձրացնէին: Բացի դրանից սահմանւած էին խիստ պատիժներ սպեկուլյանտների նկատմամբ, որոնք իրենց գործերը սարքում սպեկուլյանտների նկատմամբ, որոնք իրենց գործերը սարքում էին, օգտւելով փողի գնի երերւելուց, և աւելի ևս վատացնում էին պետական գանձարանի դրութիւնը: Մենք ասացինք, թէ՛ հասարակապետութիւն մտցնելուց ժողովուրդը մեծ իշխանութիւն ստացաւ տէրութեան մէջ: Ի հարկէ, արդէն չէր կարող մնալ 1791 թւի սահմանադրութիւնը, որ հեռացնում էր չունեւորներին վարչութեան մէջ մասնակցելուց: Նոր սահմանադրութիւնը,—ընդունւած 1793 թւին—յնուում էր ժողովրդական հիմունքների, այսինքն, ժողովրդի իշխանութեան վրայ: Այս սահմանադրութեան զօրութեամբ, բոլոր չափահաս ֆրանսիացիք իրաւունք ունէին իրենց ներկայացուցիչներն ընտրել և իրենք էլ ընտրւել, որպէս պատգամաւորներ, կենտրոնական ժողով կազմելու համար: Կենտրոնական ժողովի

ընդունած բոլոր օրէնքները պէտք է ժողովրդին ներկայաց-
ւէին հաստատուելու: Դատաւորներին և պետական պաշտո-
նեաներին պէտք է ժողովուրդն ընտրէր: Լիախատար ազա-
տութիւն խօսքի, ժողովների, ընկերութիւնների: Բոլոր
«գժբաղդ» քաղաքացիք, այսինքն, դործադուրկները, կամ աշ-
խատելու անընդունակները,—պէտք է տէրութիւնից օգնու-
թիւն, կամ աշխատանք ստանային:

Նուանդի ահադին լարման և վճռականութեան շնորհիւ,
ժողովրդական կուսակցութիւնն ազատեց Փրանսիան օտար-
երկրացիների տրշաւանքից: Սակայն նա չէր կարող իշխանու-
թիւնը երկար պահել իր ձեռքում: Նա կարող էր առաջաւոր
դիրք բռնել միայն այն ժամանակ, երբ Փրանսիային մեծ վտանգ
էին սպառնում, իսկ բուրժուական հասարակութեան յարա-
բերութիւնները դեռ չէին ամրացել: Մշտական իշխանու-
թիւնն իր ձեռքում պահելու համար, ժողովրդական կու-
սակցութիւնը յարմար պայմաններ և համապատասխան ծրագիր
պահանջւած չափով չունէր: Փարբիկային արդիւնագործութիւն
Փրանսիայում դեռ չկար, ու թէև արդէն շատ մանուֆակտուր
կար, այնու ամենայնիւ ձեռնարհեստը գերիշխում էր: Իսկ ար-
հեստաւորները կապւած էին մանր սեպհականութեան նոյնպէս,
որպէս և գիւղացիք, որոնք կազմում էին ամենաբազմաթիւ
դասակարգը: Առհասարակ պրոլետարիատը դեռ չէր կազմում
առանձին դասակարգ, որ կարողանար հասարակութիւնը ղե-
կավարել: Պրոլետարիատն արդէն այն ժամանակ ամենաաչքի
ընկնող, արի, յեղափոխական տարրն էր, բայց նրա ձգտում-
ներն ընդհանուր առմամբ յանգում էին այն բանին, որ գոյրի
աւելի մեծ հաւասարութիւն հաստատուէր, մանր սեպհականու-
թիւնն ընդարձակէր, մի քանի հարուստներ զուգէին: Մինչ-
դեռ դրանք մտածելու բաներ չէին, քանի որ անտեսական
յարաբերութիւնները Փրանսիայում միշտ տւելի ու աւելի
ուժեղօրէն զարգանում էին կապիտալիստական ուղղութեամբ,
այսինքն, խոշոր արդիւնաբերութեան և վարձու աշխատանքի
օգուտ:

Բուրժուական օգտուէց առաջին դէպքից՝ ժողովրդական
կուսակցութիւնը տապալելու և իր ձեռքն առնելու իշխա-
նութիւնը: Ժողովրդական կուսակցութիւնը կարողացաւ այն-
քան յաջողութիւն ունենալ, որ արտաքին թշնամիներն իող-
մից վտանգն այլ ևս դադարեց Փրանսիային սպառնալ: Ժո-
ղովրդական կուսակցութիւնը զօրք կազմեց և յաղթութիւն
յաղթութեան վրայ էր տանում: Բայց ժողովուրդն արդէն
յոգնած էր. նրա լաւագոյն ոյժերը պատերազմի դաշտում
էին: Ազնւականների դէմ դործադրւած տեւորը տեղին էր
մի առ ժամանակ միայն, բայց արդէն դադարել էր զրաւիչ
լինելուց ժողովրդի աչքում: Բուրժուական օգտուէց սրանից
և իշխանութիւնը խլելով, տեւորը դործադրեց յեղափոխա-
կանների դէմ: Այժմ, բուրժուական վարչութեան ժամա-
նակ, փչանում էին մեծ թւով անմեղ մարդիկ, որոնք ան-
կեղծօրէն նւիրւած էին յեղափոխութեան,—այն ինչ առաջ
փչանում էին մատնիչներն ու կասկածելիները, յամենայն
դէպս ժողովրդի թշնամիները:

Կարելի է ասել, թէ՛ հենց որ իշխանութիւնն անցաւ
բուրժուակային ձեռքը, յեղափոխութիւնն էլ հասաւ իր վախ-
ճանին: Դառնեց դեռ մէկը, Բաբեօֆ, որ դաւադրու թիւն
սարքեց, որպէսզի իշխանութիւնը խլէ ունեւոր դասակարգի
ձեռքից և հաստատէ ժողովրդական կազմ: *)

Բաբեօֆը կոմմունիստ էր: Նա ուղում էր, որ՝ հողը
և բոլոր գոյքերը դառնային ազգային ընդհանուր սեպհակա-
նութիւն: Նրա ժամանակը չէր դեռ, այլքան դեռ հասունա-
ցած չէր Փրանսիան: Բաբեօֆի ծրագիրը, հաւանական է, չէր
յաջողւի, անգամ եթէ դաւադրութիւնը չբացւէր էլ: Բաբեօ-
ֆը ընկերների հետ մարտիրոսական մահով մեռան 1797 թւին՝
այն ժամանակ ոճրագործների գլխատման համար հնարւած

*) Բաբեօֆի դաւադրութեան մասին տես „Миръ Божій“ ժամագրի
1898 թւի յօդածը:

մեքենայի (գիլիոտինի) թրի տակ: Մենք պէտք է յարգենք այս մեծ յեղափոխականի չիշատակը, որպէս առաջիններից մէկի, որոնք ուզում էին իրադրոժել այն, ինչ որ այժմ մենք ձգտում ենք և ինչ որ կարող ենք այժմ իրադրոժել:

Բուրժուազիան ոչ միայն հալածում էր յեղափոխականներին, այլ և միշտ աւելի ու աւելի էր սահմանափակում ժողովրդի իրաւունքները: Նա ձգտում էր «կարգ» սահմանել, բնութմէն շուտ համոզւեց, որ մի մարդ, ինքնակալ, աւելի հեշտ ու աւելի լաւ կարող էր պահպանել այս կարգը: Զօրքն այն ժամանակ անկախ ոյժի նշանակութիւն ստացաւ: Առաջ նա ժողովրդին էր հնազանդւում. յետոյ, երբ ժողովուրդը հեռացրւեց իշխանութիւնից, իսկ Փրանսիան կառավարւում էր բուրժուազիայի ձեռով,—դօրքը նախապատում էր լսել իր առաջնորդներին, քան կապիտալիստներին: Ժողովրդի թուլացմամբ, բուրժուազիայի գէշի «կարգ» ունեցած ձգտումով, իր առաջնորդութեամբ փառք վաստակող զօրքի անձնւիրութեամբ, օգտւեց այն ժամանակաւ ամենաաչքի ընկնող Ֆրանսիական դենքրալը, Նապոլէոն Բոնապարտը: Աւելելով իր ձեռքը միշտ աւելի ու աւելի մեծ իշխանութիւն, նա իրեն յայտարարեց, վերջապէս, 1804 թւին Փրանսիայի կայսր:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Մենք ներկայացրինք մեր գրքոյնում Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ընթացքը: Մենք տեսներ, ինչ պատճառներ առաջ բերին այն: Տեսանք, ինչպիսի սխրագործութիւններ կատարեց Փրանսիական ժողովուրդն իր իրաւունքների համար մղող կռոււմ, ինչպէս յեղափոխութիւնը հարթեց իր ճանապարհից հին հասարակութեան բոլոր հիմնարկութիւնները: Սակայն, յեղափոխութիւնը վերջացաւ, իսկ ժողովուրդը չմնաց զրուծեան տէրը: Նապոլէոն Բոնապարտը ճնշեց հասարակապետութիւնը, և բանւորական մասսաներն ընկան նոր լժի տակ: Մի՞թէ յեղափոխութեան բոլոր ջանքերն իզուր կորան: Մի՞թէ այս էր վիճակւած յեղափոխութեանը—յեղափոխութեան, որի ժամանակ այնքան արիւն թափւեց, ինքնազոհութեան և հերոսական արիութեան արնաքան ապացոյց տրւեց, այնքան յաղթութիւն տարւեց: Ո՛չ: Մեծ յեղափոխութիւնն անցողակի երևոյթ էր, նա իրենով սկսեց մարդկային պատմութեան նորագոյն շրջանը: Նրա բարերար հետեւանքները բոլորեալն, փոփոխական և թույլ չէին, այլ մնացին որպէս տանջող մարդկութեան հաստատունւաններ: Ու թէև աշխարհիս զահին այժմ բազմած է բուրժուազիան, բայց յեղափոխութեան բարերարութիւններից միշտ աւելի ու աւելի է սկսում օգտւել պրոլետարիատը: Փրանսիական յեղափոխութիւնը,—սրա վրայ մենք միշտ ուշադրութիւն էինք դարձնում, —աւերեց նախկին հասա-

րակական կազմը, որ ազնւականների արտօնութեանց սկզբունքի վրայ էր հիմնւած, և ճանապարհ հարթեց նոր հասարակութեան համար, ուր ամեն ինչ վճռուած է գոյքը, ուր հաւասարութիւն կայ օրէնքի առաջ, և ժողովուրդն օժտուած է օրէնադրութեան մէջ մասնակցելու և պետական գործերի վրայ ազդելու իրաւունքով: Արդիւնարեւութիւնը, որ հին կապանքներէ ազատուած էր և ազատ օգտուած էր տէխնիքական զօրեղ գիւտերով, — զարգացաւ հրաշալիօրէն: Բանւոր դասակարգն այժմ եռանդուն կռոււած է կապիտալիզմի, բուրժուազիայի տնտեսական դօրութեան դէմ: Բայց միայն հենց այս կապիտալիստական կազմն էլ պայմաններ է ստեղծել այս կռիւ համար, պայմաններ, որոնք անկասկած են դարձնում պրոլետարիատի յաղթութիւնը: Այնինչ մանր սեփականատէրերը, — արհեստավորները, խանութպանները և այլն, — աւելի ու աւելի արագ են փչանում խոշոր կապիտալի ժանր անուանների տակ և պրոլետարական բանակը, որ ոչ մի սեփականութիւն չունի, բայց իր աշխատաւոր ուժից, աճում է անընդհատ: Շահագործողները հետզհետէ աւելի են հարստանում, բայց նոցա թիւը միշտ աւելի է նւազում՝ պրոլետար մասսաների համեմատութեամբ: Վարձու բանւորներն այժմ դառել են հարստութեան արտադրութեան զլխավոր, կարեւորագոյն հիմք: Այն ինչ կապիտալիստների դերը և նշանակութիւնը հետզհետէ աւելի է սահմանափակուած նրանով, որ նրանք իրենց տոկոսաբեր թղթերի կուպոններն կտրում և ազնւականութեան նման ձրիակերների կեանքով են ապրում: Հասարակութեան նրանք պէտք չեն, ինչպէս անպէտք դուրս եկաւ նաև ազնւականութիւնը:

Պրոլետարիատը չի կարող հանգիստ նայել, որ՝ մինչ հարստութիւնները զարմանալի աճում են, մինչ ամեն մէկի համար կճարւէին կեանքի անհրաժեշտ բաւական իրերը, — միլիոնավոր մարդիկ ապրում են աղքատութեան, իսկ հարիւրները ճոխութեան մէջ: Ժողովուրդը ոչնչաց-

ւած է, այժմ մենք պէտք է ձգտենք վարձու աշխատանքը ոչնչացնել, մենք չենք պատկանում, առաջւայ նրման, մէկ տիրոջ: Բայց չենք էլ ուզում պատկանել տէրերի կազմակերպութեան՝ կապիտալին: Այժմ մենք իրաւունք ունենք աշխատել, ուր և որպէս ուզում ենք: Բայց մենք պէտք է կռենք, որ՝ մեր աշխատանքի պատուները պատկանեն մեզ, որ աշխատանքի աշատութիւնը դառնայ բանւորի ազատութիւն: Մենք հաւասար իրաւունքներ ենք վայելում օրէնքի առաջ, այժմ մենք պէտք է ձգտենք լիակատար, իսկական ազատութեան, — այսինքն, որ՝ ամեն մէկս ունենայ հաւասար հնարաւորութիւն զարգացնելու իր ուժերը և ընդունակութիւնները, ունենալ միատեսակ իրաւունքներ բարօրութեան ու բախտաւորութեան ձգտելու: Այնտեղ, ուր գոյութիւն ունի քաղաքական ազատութիւն, — պիտի օգտուենք նրանից, որ նա մեր ձեռքում գէնք դառնայ տնտեսական և հասարակական ազատութիւն գրաւելու, որ բանւորներն իշխանութիւն ստանան: Նրանք պէտք է այն ստանան, որովհետեւ իրենք են հարստութիւններ ստեղծում: Նրանք այնպէս պէտք է վարեն՝ հասարակական գործերը, որ՝ ամենքի համար տեղ գտնւի բնութեան սեղանի շուրջը:

Ուր չկայ դեռ քաղաքական ազատութիւն, այնտեղ մենք բանւորներս կնւաճենք այն:

Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնն ահագին ազդեցութիւն ունեցաւ ոչ միայն այն երկրում, Փրանսիայում, ուր նա տեղի ունեցաւ, նա յեղաշրջում առաջ բերեց ամբողջ եւրոպայում: Ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան սկզբունքները, որոնք ծնւեցին Փրանսիայում ու այնտեղ իրենց ճանապարհն էին բացում հրդեհների, աւերակների ու արեան միջով, — բոլոր տանջող և կռող մարդկութեան տրիւն ու միսը դարձան: Մեծ յեղափոխութեան ժամանակից ի վեր իշխող դասակարգերը չեն կարող հաւատացած լինել, — թէ՛ փղաջ օրն իրենց է պատկանում, ժողովուրդը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԱՐԻԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

19) Ռ. Սոց. Գեդ. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրու-
թիւնը:

2) Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկեան բանւորներին» — գինը՝ 1 ռուբ.

3) Վ. ՖՐԻԶԷ. «Պրոլետարական պոէզիան» — գինը՝ 2 ռ.

4) ԶԻԶԵՐԻՆ. «Բրեստից յետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ
Համագումարին) — գինը՝ 1 ռուբ.

5) ՆԵՐՉԱԿ. «Դէպքերը Բագում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բագի
Խորհրդային իշխանութիւնը»:

6) Ն. ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառոտ պնասագրութիւնը և մարք-
սիզմի շարադրութիւնը) — գինը՝ 1 ռ. 50 կ.

7) ՆԵՐՉԱԿ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակ-
տիկան» — գինը՝ 1 ռ.

8) Ն. ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմունիստների ծրագիրը» — գինը՝ 3 ռ.

9) Մ. ՊԱՆԼՈՎԻԶ (Վելյոմաճ) «Ասիան և իր դերը համաշխարհա-
յին պատերազմի մէջ» — գինը՝ 3 ռ.

10) ԿԱՐԼ ՌԱՒԵԿ. I. «Կոմունիստական Կուսակցութիւնը Գեր-
մանիայում». II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով) — գինը՝ 1 ռ.

11) «Խորհրդային Սառավարութեան նուստն Վիլսոնին» — գինը՝ 75 կ.

12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը» —
գինը՝ 2 ռուբ.

13) Հ. ՅՈՎՍԵՓԵԱՆ. «Դէպի քաղաքացիական կռիւ»:

14) Գ. ԶԻՆՈՎԵԻ, ԻԻ. ԿԱՄԵՆԵԻ և Լ. ՏՐՈՅԿԻ — «Ն. Լենին»
(Վլադիմիր Իլիչ Ուլյանով) — գինը՝ 2 ռ.

15) Գ. ՄԱՐԺՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմունիստական Մանիֆեստ» —
Պլեխանովի, Կոտլեկովի և հեղինակների առաջաքաններով — գինը՝ 3 ռ

16) Պ. ԼԱՅԱՐԳ Տնտեսական էտիկայի և Կոմունիզմ — գինը՝ 50 կ.

17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ի՞նչ բան է Խորհրդային իշխանութիւնը և ինչ-
պէս է նա կազմուած» — գինը՝ 2 ռ.

18) Ֆրանսիական Սճ Յեղափոխութիւնը — գինը՝ 3 ռ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԻՍՏ. ԿՈՒՅԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների)
Ծրագիրը:

2) III Խնտերնացիոնալի Պլատֆորման:

3) Ն. ԼԵՆԻՆ. «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմո-
կրատիայի մասին» — գինը՝ 50 կոպ.

4) Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ներկայացուցիչի գե-
կուցումը III Կոմունիստական Խնտերնացիոնալին — գինը՝ 60 կոպ:

5) Կոմունիստական Խնտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի
պրոլետարիատին — գինը՝ 1 ռ.

6) Ն. ԼԵՆԻՆ. «Երբորդ Խնտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»
— գինը՝ 1 ռ.:

7) Ն. ԼԵՆԻՆ. «Ի՞նչ պէտք է լինի մեր կուսակցութեան անունը» —
գինը՝ 50 կ.: